

ՍՏԱԼԻՆԻ ԿԵՐՊԱՐԸ  
ՄՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊՈԵԶԻԱՅԻՄ  
ԵՎ ՖԻԼՈՍՈՐԻՄ

891.99.09

Կ. 73



ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՅՆՔ.

-6 NOV 2011

АКАДЕМИЯ НАУК СССР—АРМЯНСКИЙ ФИЛИАЛ  
ИНСТИТУТ ЛИТЕРАТУРЫ И ЯЗЫКА

АС. АСАТРЯН

ОБРАЗ СТАЛИНА  
В СОВЕТСКОЙ АРМЯНСКОЙ ПОЭЗИИ  
И ФОЛЬКЛОРЕ

ИЗДАТЕЛЬСТВО АРМФАН-а  
ЕРЕВАН 1 9 4 0

ՍՍՈՒՄ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ — ՀԱՅԿԱԿԱՆ ՖԻԼԻԱԼ  
ԳՐԱԿԱՆ ՈՒԹՅԱՆ ԵՎ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

891.99.09

Ա-73

ար

Ա.Ս. ԱՍԱՏՐՅԱՆ

ՍՏԱԼԻՆԻ ԿԵՐՊԱՐԸ  
ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊՈԵԶԻԱՅՈՒՄ  
ԵՎ ՖՈԼԿԼՈՐՈՒՄ

ԱՐՄՖԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆ 1 9 4 0

Տպագրվում է ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիայի  
Հայկական Ֆիլիալի Նախագահության որոշմամբ



«Ստալին-մեր երկրի դու նշանաբան.  
Ստալին-դու ոգին մեր պոեզիայի»:  
ԶԱՄԲՈՒԼ

# I

Հայ ժողովրդի սովետական շրջանի պոեզիան (ներառյալ ֆոլկլորը), մանավանդ վերջին տասնամյակի ընթացքում, տոգորված է հանճարեղ Ստալինի գյուցազնական կերպարը կերտելու նվիրական ձգտումով:

Դարերի տառապանքից ազատագրված և իր ազգային վերածնունդն ապրող հայ ժողովուրդն իր երախտագիտական զգացմունքն է արտահայտում այն մեծ մարդուն, որը տիտանական ուժով նրան (հայ ժողովրդին) ազատագրեց իմպերիալիզմի խեղճող օղակից և փրկության լայն ճանապարհ գույց տվեց: Մեր բանաստեղծներն ու ժողովրդական երգիչները երգելով Ստալինին, նրա առաջ բաց են անում հայ «ժողովրդի երախտապարտ սիրտը մեծ»:

Գովերգելով ու մեծարելով Ստալինին, մեր բանաստեղծներն ու ժողովրդական երգիչներն ամեն անգամ վերհիշում են իրենց ժողովրդի տառապանքով ու տանջանքով լի մինչհոկտեմբերյան բաղձադարյան պատմությունը, հիշում են մանավանդ այն, թե ինչպես սոցիալիստական ռեվոլյուցիայի հաղթանակի և այդ հաղթանակը դարբնող երկու մեծ առաջնորդների՝ Լենինի ու Ստալինի շնորհիվ, հայ ժողովուրդն էլ փրկվեց կործանումից և կանգնեց ազատության ու երջանկության լայն ճանապարհի վրա:

Այդ միտքը հիանալի կերպով պատկերված է մեր կրկնակի շքանշանակիր բանաստեղծ Նայիրի Զարյանի հեշտակվոր «Ստալին» բանաստեղծության հետևյալ երեք քառյակում.

ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիայի Հայկական Ֆիլիալի ընկեր Ստալինի ծննդյան 60-ամյակին նվիրված 7-րդ գիտական սեսիայում (1939 թ. գեկտեմբեր 18) կարդացած գեկուցումից:

«Կանգնած էր նա, իմ ժողովուրդը, մութ վիհի եղերքին՝  
Իր հանճարի հազարամյա մարգարիտները ձեռքին,  
Կանգնած էր նա անդունդի մոտ, անդնական ու հյուժված,  
Արյունակից և ալյազգի ոտխներեց հալածված,  
Մահվան մըթին մըրըկները ամենակուլ բերանում՝  
Նա, հռչակված բազուկներով, մի նոր ելք էր որոնում:  
Ազատարար Հոկտեմբերի քայլերն այնժամ թնդային,  
Հընչեց քո ձայնը լենինյան՝ Լենինի հետ միասին:  
Դուք օգնության լույս նետեցիք ժողովրդին իմ չորսո՛ւմ,  
Դուքս կոչեցիք մահվան վիհից դեպի կյանքի դուռը բաց:  
Նա վեր կացավ գոտեպնդված, ոտնեց թափով ահագին  
Ու միացավ կոմունիզմի աշխարհներթ բանակին»:

Այս քառյակներում բանաստեղծական տաղանդի մեծ ուժով պատկերված է հայ ժողովրդի պատմության մինչսովետական շրջանի ամենավերջին էտապը, երբ աշխարհավեր իմպերիալիստական պատերազմն իր ամենակուլ բերանում սպառնում էր ոչնչացնել հայ ժողովրդին, որը, մահավանդ 1917—1920 թվերին, իրապես կանգնած էր կործանման «մութ վիհի եղերքին»:

Հայ ժողովուրդն ահա այդ տագնապալից վիճակում, իր հռչակված բազուկներով մի նոր ելք էր որոնում», իսկ այդ ելքը ցույց տվեցին՝ միայն Լենինն ու Ստալինը, Հոկտեմբերի հաղթանակի իրենց վառած լույսով: Այդ նրանք էին՝ մարդկային պատմության այդ մեծագույն հերոսները՝ Լենինն ու Ստալինը, որ հայ ժողովրդին ազատագրական պայքարի ուժ ներշնչեցին ու դուրս կոչեցին նրան մահվան վիհից՝ դեպի ազատ ու երջանիկ «կյանքի դուռը բաց»: Եվ այնուհետև իր վերջին, մոտ քսանամյա պատմության ընթացքում՝ «կոմունիզմի աշխարհներթ բանակին» շարքերում՝ հայ ժողովուրդը, մյուս բախտակից ժողովուրդների հետ միասին, գտավ իր՝ դարերով երազած ազատության ու երջանկությանը՝ ունեցավ ազատ հայրենիք, ազգային անկախություն ու իրավահավասարություն մյուս մեծ ու փոքր ազգերի եղբայրական ընտանիքում, տնտեսության բարգավաճում, ձեռք ազգային, բովանդակությամբ սոցիալիստական կուլտուրայի ծաղկում և լուսավոր, ապահով, ուրախ ու երջանիկ կյանք բոլոր աշխատավորների համար:

«Լենինյան-ստալինյան իմաստուն և հանճարեղ ազգային-քաղաքականությունը ազատագրված հայ ժողովրդի առաջ բա-

ցեց անհուն կարեկրություններ՝ անկաշկանդ առաջադիմելու և ապրելու իմաստավորված ու երջանիկ կյանքով» — առաջ մեր՝ կլասիկ մեծ բանաստեղծը՝ Ավետիք Իսահակյանը «Մասունցի Դավթի» 1000-ամյակի առթիվ ունեցած իր կուլթիում<sup>1</sup>:

Իսկ այդ մեծագույն հաղթանակները ձեռք բերվեցին Լենինի-Ստալինի փառապանծ պարտիայի իմաստուն ազգային քաղաքականության շնորհիվ, հանճարեղ Ստալինի շնորհիվ, որն իր դյուցազնական կամքով սովետական ժողովուրդների կյանքի նավը երջանկության մի ափից դեպի նոր, ավելի երջանիկ ափերն է տանում:

Ահա թե ինչու սովետական բոլոր ժողովուրդների հետ միասին հայ «ժողովրդի երախտապարտ սիրտն» էլ ցնծություն բացված է ժողովուրդների մեծ ազատարարի՝ հանճարեղ Ստալինի առաջ՝ մեր պոեզիայի, մեր ժողովրդական ստեղծագործության արեվաբառ գրքի պայծառ էջերով:

Այս կապակցությամբ անհրաժեշտ է նախ հիշել, թե ինչ է երգել ու երազել մեր ժողովուրդն իր բանաստեղծական խոսքի ներկայացուցիչների միջոցով՝ Խորենացու, Եղիշիի հեռավոր ժամանակներից սկսած մինչև Թումանյանը, Իսահակյանն ու Տեղյանը:

Թե ինչ է ներկայացնում իրենից հայ ժողովրդի հին ու միջին դարերի պատմությունը և ինչ է երգել ու երազել մեր ժողովուրդն այդ ժամանակներում, դա հիանալի կերպով պատկերել է մեր պոեզիայի մեծ վարպետներից մեկը՝ բանաստեղծ Ավետիք Իսահակյանն իր՝ այս տարվա օգոստոսին գրած երկու ութնյակով՝ «Մեր պատմիչները և գուսանները» վերնագրով:

«Մեր հոյակապ հին վանքերի մութ խուցերի մենության մեջ  
Պատմիչները մեր վշտահար, մեղմ կանթեղի լույսով անշեջ,  
Մի նշխարով, մի կում ջրով և ճգնություն գիշերն անբուռ  
Պատմությունը մեր գրեցին մազադաթի վրա դժգույն,—  
Եղեռները, ոճիրները՝ հորդանքի արյունը ուշուշու,  
Փլուզումը հայրենիքի և ոստի սուրը անկուշտ:  
Եվ ողբացին լալահառաչ դշխեմ բախտը Հայաստանի  
Եվ հուսացին արդարության մի խուլ ասածու դատաստանի»<sup>2</sup>

<sup>1</sup> «Խորհրդային գրականություն», 1939 թ., № 8—9, էջ 38.

<sup>2</sup> «Խորհրդային Հայաստան», 1939 թ., օգոստ. 10, № 185:

Մեր պատմիչները գրել առած «եղեռները, ոճիրները հորդաների արյունառնություն», «հայրենիքի փլուզումը և ոսոխի սուրը անկուշտ» չպակասեցին, այլ ավելի սաստկացան հետագա դարերում՝ ընդհուպ մինչև ռուսական ու թյուրքական վերջին ցարերի ու սուլթանների արյունոտ տիրապետությունը:

Ահա թե ինչու այդ հետագա դարերում էլ հայ ժողովրդական գուսանները-բանաստեղծները շարունակում էին «ողբալ լալահառաջ դշխեմ բախտը Հայաստանի» և «հուսալ արդարություն», ոմանք «մի խուլ ասածու դատաստանի», ոմանք էլ այդ արդարությունը տեսնում էին իր՝ ժողովրդի ազատագրական պայքարի մեջ՝ միացած մյուս ժողովուրդների հետ: Եվ ահա թե ինչու ճիշտ է, որ «մեր գրականության հավերժ շողջողացող բովանդակություն է եղել ազատության անշեջ ծարավը», ինչպես վերջերս գրեց մեր մեծահռչակ բանաստեղծ Ավ. Իսահակյանը: Մեր գրականության պատմության նոր շրջանում էլ ժողովրդի «ազատության անշեջ ծարավն» է այրել գրողներին-բանաստեղծներին ու ժողովրդական աշուղներին՝ ազատության ծարավը, որ երբեք չի հանգել, այլ ավելի ու ավելի է բորբոքվել, չնայած ավելի էր խորանում «հայոց վշտի անհուն ծովը», «խավար մի ծով անագին», որի մոլթ ալիքների մեջ տառապելով «լող է տվել» հայ ժողովրդի ազատատենչ ոգին, միշտ ձգտելով դեպի ափը փրկության:

Ինչո՞ր հայ մեծ գրողների-բանաստեղծների, իրենց ժողովրդի ու հայրենիքի ազատության գործին ազնվորեն նվիրված մարդկանց հայացքները, մեր մեծ լուսեցու խոսքերով ասած, միշտ կարոտով հառել են

«Հեռու աստղերին,  
Երկնքի ծերին,  
Թե երբ կբացվի պայծառ ազավոտ  
Հայոց լեռներում,  
Կանաչ լեռներում»:

Այդ «պայծառ առավոտը» հայ ժողովրդի բազմադարյան պատմության հորիզոնում վերջապես բացվեց 1920 թվի նոյեմբերին և այն՝ մարդկության նոր Արևելքից՝ Սովետական Ռուսաստանից՝ բոլշևիզմի հզոր արևների՝ Լենինի և Ստալինի հանձարի լույսով: Այդ առավոտվա առաջին ճառագայթները եղան մեր ռեվոլյուցիայի մեծ առաջնորդների պատմական վոլջույնները՝ ուղղված նորածին Սովետական Հայաստանին, իմպերիալիզմի

խեղդող, օղակից ազատագրված հայ ժողովրդին: Այդպիսով, «հայ ժողովուրդն առաջին անգամ հայրենիք նվաճեց իր համար» և սկսեց «երջանիկ ու բերկրալից կյանքի կառուցումը» («Պրավդա»): Եվ «միայն Սովետական իշխանության գաղափարը խաղաղության և ազգային վերածնության հնարավորություն բերեց Հայաստանին»: Մեր սիրելի մեծ Ստալինի այս իմաստուն խոսքերով է սկսվում հայ ժողովրդի ազատ ու երջանիկ կյանքի «պայծառ առավոտը»:

«Հայոց լեռներում,  
Կանաչ լեռներում»:  
(Հ. Թումանյան)

Իսկ վերջին մոտ քսան տարվա ընթացքում մարմնավորվեց հայ ժողովրդի դարավոր երազանքը՝ ազատ ու երջանիկ կյանքի մասին:

«Խնամքով պահպանելով անցյալի կլասիկ արվեստի հուշարձանները, հայ ժողովուրդն ստեղծում է նոր, հիանալի արվեստ» («Պրավդա»), ստեղծում է գեղարվեստական նոր, իր ազատ ու երջանիկ կյանքն արտացոլող հուշարձաններ:

Ահա այդ նոր արվեստի մեջ ամենից բարձր ու վեհ խոյանում է մեր ժամանակի մեծ մարդու՝ ժողովուրդների հանձարեղ առաջնորդի՝ սիրելի Ստալինի դուստրական կերպարը, բարձրանում է սովետական բազմազգ ժողովրդի ուրախ ու հրճվալից կյանքի և ողջ մարդկության դարնան ֆոնի վրա:

## II

Նախանցյալ տարի՝ Հոկտեմբերյան Սոցիալիստական ռեվոլյուցիայի փառապանծ 20-ամյակի առթիվ՝ Ստալինի մեծ զինակից, Սովետական կառավարության ղեկավար Վյաչեսլավ Միխայլովիչ Մոլոտովը իր տված պատմական ղեկուցման մեջ, ամփոփելով սոցիալիզմի համաշխարհային պատմական հաղթանակները ՄՍՌՄ-ում, ասաց հետևյալը.

«Մեր երկրում ստեղծվել է առաջներում չտեսնված, ժողովրդի բարոյական ու քաղաքական միասնություն, սոցիալիստական հասարակության բարոյական և քաղաքական միասնություն: Ժողովրդի բարոյական-քաղաքական միասնությունը մեր երկրում առնի և իր կենդանի մարմնացումը: Մեզ մոտ կա մի անուն, որը

դարձել է սոցիալիզմի հաղթութեան սիմվոլը: Այդ անունը միա-  
ժամանակ սովետական ժողովրդի բարոյական և քաղաքական մի-  
ասնութեան սիմվոլն է: Դուք գիտե՞ք, որ այդ անունն է— ՍՏՍՆԻՆ՝:

Սովետական ժողովրդի՝ ձևով ազգային, բովանդակությամբ  
սոցիալիստական արվեստն ու պոեզիան Սովետական մեծ Միու-  
թյան բազմախիտ բազմազգ ժողովրդի այդ «բարոյական ու  
քաղաքական միասնութեան» գեղարվեստական պայծառ հայելին  
է, որի մեջ ցոլանում է այդ մեծ ժողովրդի սիրտն ու հոգին:

Լինելով «ժողովրդի բարոյական-քաղաքական միասնութեան  
սիմվոլը» — Ստալինի անունը միաժամանակ սովետական արվեստ-  
ների ու պոեզիայի զարգացման սիմվոլն է՝ արվեստագետների ու  
բանաստեղծների, ժողովրդական երգիչների ստեղծագործական  
թիֆլքների ոգեշնչման աղբյուրը:

Այդ շատ գեղեցիկ կերպով արտահայտել է մեր էպոխայի  
հանճարեղ ժողովրդական երգիչ, Ղազախստանի շքանշանակիր,  
հարյուրամյա աչին Ջամբուլը, սրտագին բացականչելով՝

«Ստալին — դու ոգին մեր պոեզիայի»:

Սովետական ժողովուրդների բանաստեղծների ու երգիչների  
ստեղծագործություններում՝ լիրիկական ջերմությամբ և էպիկա-  
կան-հերոսական մոտեմենտալությամբ բարձրանում է Ստալինի  
դյուցազնական կերպարը՝ արտացոլելով իր մեջ մեր մեծ դարա-  
շրջանի կյանքն ու պայքարը:

Ստալինի անվան շուրջն ստեղծված գեղարվեստական երգե-  
րում լավում է մեր էպոխայի արձագանքը, զգացվում է սովետա-  
կան ժողովրդի սրտի բաբախումը: Այն լավագույնի, ամենամա-  
քուրը և ամենապայծառը, ինչ որ դարերով կուտակել է ժողո-  
վուրդն իր բանաստեղծական գանձարանում, այդ ամենը սովե-  
տական բանաստեղծներն ու ժողովրդական երգիչները հանդես են  
բերում՝ գովերգելու Ստալինին, պատկերելու նրա հոյակապ կեր-  
պարը:

Այդպես է Սովետական Միութեան բոլոր ժողովուրդների  
պոեզիայում, այդպես է նաև սովետական հայկական պոեզիայում  
ու Ֆոլկլորում:

«Հոյակապ խնդիր է պատկերել մի մարդու, որն այնքան»

անխղելի միացած է համաշխարհային նշանակութուն ունեցող  
գործի հետ, կերտել կերպարը մի քաղաքական մարտիկի, որի  
միջով երևում են աշխարհներ ու դարազուլաներ: Հետեւելով նրան  
նրա կյանքի ուղիներով, մենք ոտք ենք դնում պատմութեան հո-  
ղի վրա, անցնում անկոխ ճանապարհներ և մոտենում մարդկու-  
թյան բիբլիայի անտիպ էջերին<sup>1</sup>:

«Ահա նա — մեծագույնը և նշանավորագույնը մեր ժամա-  
նակակիցներից: Նա տանում է իր ետեից 170 միլիոն (այժմ մոտ  
200 միլ. Ա. Ս.) մարդ, 21 միլիոն (այժմ՝ դրանից է՛լ ավելի. Ա. Ս.)  
քառակուսի կիլոմետր տարածութեան վրա»։ «...Իր ամբողջ հա-  
սակով մեկ նա բարձրանում է Նվրոպայի վրա, և Ասիայի վրա,  
անցյալի վրա և ապագայի վրա»։ «Նա է հեճկ կենտրոնը, սիրտն  
այն ամենի, որ փառագայթած և տարածվում է Մոսկվայից ամբողջ  
աշխարհով մեկ»<sup>2</sup>: Այդ Ստալինն է, այն «մարդը, որի միջոցով  
բացվում է նոր աշխարհը»։ Փրանսիացի մեծ գրող Հանրի Բար-  
բյուսի տված այս հիանալի բնութագրումները (նրա նշանավոր  
«Ստալին» գրքում, գրված 1935 թվին) խոսում են այն մասին,  
թե ինչքան վեհ, ինչքան փառաշուք, միաժամանակ դժվարին —  
բարդ ու պատասխանատու խնդիր է տալ Ստալինի կերպարը  
պոեզիայում և թե ինչպիսի վիթխարի իդեական-ստեղծագործա-  
կան իմաստ ու նշանակութուն ունի «Ստալին» թեման մեր  
պոեզիայի համար, մեր բոլոր արվեստների համար:

Փարթամորեն աճող մեր պոեզիայի ու ֆոլկլորի ստալի-  
նյան ցիկլը անշափ հարուստ է թե իր իդեական-քաղաքական  
հագեցվածությամբ և թե իր ստեղծագործական բանաստեղծական  
բազմազանությամբ: «Ստալին» թեման մի ամբողջ, անհունորեն հա-  
րուստ, խորը համայնապարփակ թեմա է, այն ամբողջ նոր աշ-  
խարհը, որ պրոլետարական ռեվոլյուցիայի հաղթանակով, Լենինի և  
Ստալինի հանճարով բացվեց երկրագնդի մեկ վեցերորդ մասում:  
Սովետական գեղարվեստական կուլտուրան, սովետական ար-  
վեստները, այդ թվում և սովետական պոեզիան ու ֆոլկլորն այս  
նոր աշխարհի հաղթական կառուցման մեծագույն նվաճումներից  
են, և իրենց մեջ, բնականորեն, անդրադարձնում են այդ նոր

<sup>1</sup> А. Барбюс — «Сталин», 1936 г., стр. 4.

<sup>2</sup> Նույն տեղ, էջ 3: Ընդգծումը մերն է. Ա. Ա.

աշխարհի կառուցման հանձարեղ վարպետին ու առաջնորդին: «Ստալին» թեման մեր բանաստեղծական կուլտուրայի զարգացման, հաջատացման մեծագույն խթանն է և անսպառ աղբյուրը: Այդ թեման մեր բոլոր արվեստներին, այդ թվում և պոեզիային ու ժողովրդական բանահյուսութեանը հաղորդում է հավերժական կենսունակութուն, հանդիսանալով նրանց՝ սոցիալիստական արվեստի ու պոեզիայի զարգացման արևային ենթադիման:

«Համաշխարհային գրականութեան մեջ, — ասաց ընկեր Ժգանովը իր նշանավոր ճառում՝ սովետական գրողների Համամիութենական I համագումարում, — գրականութեանը, որը մեր սոցիալիստական շինարարութեան միա ու արյունիցն է, ամենաերիտասարդ գրականութեանն է բոլոր ժողովուրդների ու երկրների գրականութեաններին», բայց «նա միևնույն ժամանակ ամենագաղափարական, ամենաառաջավոր և ամենահեղափոխական գրականութեանն է»<sup>1</sup>:

Ինչպես Լենինի, Նույնպես և նրանից անբաժան ընկեր Ստալինի տիտանական կերպարների մոտքը սովետական գրականութեան ու ֆուկլորի մեջ, վերջիններին զարգացումն առաջ է մղել և ավելի ու ավելի արագ թափով առաջ է մղում՝ նախորդ դարաշրջանների գրականութեաններին միանգամայն անծանոթ իդեալական-ստեղծագործական ուղիներով:

Մարդկային պատմության այդ մեծագույն հերոսների գեղարվեստական կերպարների կերտումը՝ մասնավորապես վերջին տասնամյակի ընթացքում՝ դարձել է կենտրոնական, առանցքային ստեղծագործական խնդիր սովետական բոլոր արվեստներին, այդ թվում և պոեզիայի ու ֆուկլորի համար:

Այդ կենսական-մարտական խնդիրը մեր բանաստեղծներին, սովետական աշուղներին ու ժողովրդական երգասացներին մղողում է ստեղծագործական անդուլ որոնումներին՝ մեր մեծ Առաջնորդի գյուցազնական կերպարը մեծագույն վարպետութեամբ կերտելու համար:

Իսկ այդ որոնումներին արդյունքը եղել է և ավելի լայն

<sup>1</sup> Ա. Ա. Ժգանով — խորհրդային, գրականութեան աշխարհի ամենագաղափարական և ամենաառաջավոր գրականութեանն է. հայ. հրատ., 1935 թ., էջ 9—10:

ծավալով կլինի հետագայում՝ մեր պոեզիայի ու ֆուկլորի ստեղծագործական բազմազանութունը, որն աչքի է ընկնում մասնավորապես նրանց ստալինյան հարուստ ցիկլում:

### III

Մեր պոեզիան ու ֆուկլորը, մեր ողջ գեղարվեստական ստեղծագործությունն իր բոլոր ճյուղերով սողորված է, ներթափանցված Լենինի և Ստալինի ոգով, բուլլեիզմի հզոր, աշխարհը վերափոխող գաղափարներով, բայց այդ ստեղծագործության մեջ կարելի է առանձնացնել մի ամբողջ ցիկլ՝ նվիրված ինչպես Լենինին, Նույնպես և Ստալինին: Ահա Լենինյան և ստալինյան այդ ցիկլն էլ հարուստ է ոչ միայն իր թեմատիկայով, այլ և իր ստեղծագործական բազմազանութեամբ, գաղափարների գեղարվեստական մարմնավորման ձևերով ու գունազեղութեամբ:

Մասնավորապես ստալինյան ցիկլում կան և՛ լիրիկայի, և՛ էպիկայի շատ բազմազան ձևեր: Այստեղ կա էպիկական-հերոսական պոեմ, լիրիկական-հերոսական պոեմ, լեգենդ, բալլադ, լիրիկական բանաստեղծության մի շարք տեսակներ՝ ներբող-ձոն, քառյակ, ութնյակ, նամակ-երգ-բանաստեղծություն, հաստուշկաներ և այլն:

Այդ բազմազանութեան մեջ կա մի հիմնական բնորոշ գիծ, որով օժտված են պոետական ստեղծագործության բոլոր այդ ձևերը — այդ գիծը հերոսականութեանն է, որով մեր պոեզիան, իր մյուս առանձնահատկությունների հետ միասին, հիմնովին տարբերվում է նախորդ ժամանակների պոեզիայից ու ֆուկլորից: Ստալինին նվիրված բոլոր ժանրերի ստեղծագործություններն էլ շնչում են հերոսականութեամբ, մի գիծ, որը նոր կերպարանք ու նոր որակ է տալիս մեր պոեզիայի ժանրերին: Հերոսականութեան շնորհիվ էլ՝ էպիկական ու լիրիկական պոեզիան վերափոխվել ու վերափոխվում է. էպիկականը սողորվում է ջերմ լիրիզմով, իսկ լիրիկականը՝ էպիզմի առնական-մարտական շնչով ու պատմական լիցքով:

Մեր պոեզիայի ու ժողովրդական բանահյուսության ուշադիր ուսումնասիրությունը հաստատում է այդ նշանակալից փառալը՝ այն, որ մեր մեծ Առաջնորդի տիտանական կերպարը կերտելու նվիրական աշխատանքով սովետական բանաստեղծներն ու

ժողովրդական երգիչներն արտահայտելով մեր ժողովրդի անսահման սերն ու նվիրվածությունը բոլշևիկյան պարտիային և սոցիալիստական հայրենիքին, նրանք մեր բանաստեղծական կուլտուրան տանում են դեպի «ամպածրար կատարներ», ձգտում են «քայլել դարձրի հետ», անհունորեն ավելի սիրելով իրենց ստեղծագործություն ղեկավարածին հերոսին, ավելի «տաք ու սրտալի»,

Ինչպես սիրում էր Ֆիրդուսին  
Իր քաջ, առյուծ Ռոստամ-Ջալին  
Ինչպես Հոմերն Աքիլլեսին,  
Ինչպես Սաֆուն իր սիրածին»<sup>1</sup>:

Այդ անսահման սիրո ու նվիրվածության արդյունքն են Ստալինին նվիրված այն բաղմամբով հիասքանչ, հուզիչ ստեղծագործությունները, որոնք մեր գեղարվեստական գրականության լավագույն գործերն են՝ մեր ժողովրդի երջանկության ապրումներով և մեր մեծ հայրենիքի հերոսական «պատմությունով լի»:

#### IV

Նշանակալից փաստ է, որ մեր պոեզիայում Լենինի, Նույնպես և մեծ Ստալինի կերպարը տալու ուղղությամբ առաջին քայլը կատարել է հայ պոեզիայի հայտնի և հայտնի պոետները, որոնք մեր գեղարվեստական գրականության լավագույն գործերն են՝ մեր ժողովրդի երջանկության ապրումներով և մեր մեծ հայրենիքի հերոսական «պատմությունով լի»:

Առաջին անգամ նա հնչեց Ստալինի նվիրական անունը մեր պոեզիայում՝ Սովետական Միության հոր՝ անմահ Լենինի անվան հետ միասին, սրանից մոտ 18 տարի առաջ գրած իր նշանավոր «Վոլխովստոյ» պոեմում:

Պոեզիայի մեծ բանաստեղծը սոցիալիզմի կառուցման, սոցիալիստական ինդուստրիալիզմի փոքր վրա բարձրացնում է Ստալինի կերպարը, որպես Լենինի արժանավոր հաջորդի, նրա գործը հավատարմորեն ու անսասան շարունակողի:

Հիշյալ պոեմի («Վոլխովստոյ») վերջաբանում Հ. Հակոբյանը գրել է հետևյալը.

<sup>1</sup> Ն. Ջաբրյան — «Ամբոց», էջ 67—68, «Ֆիրդուսի» բանաստեղծությունը:

«Ձկա Լենին... (Վոլխովստոյը մի մարմնացում Լենինի),  
Որ պատվիրեց Վոլխովստոյը շինել, ինչ էլ որ լինի...»

«Ձկա Լենին, — շարունակում է բանաստեղծը, — բայց «Լան Լենինի զավակները», որ անշեղորեն ու հերոսաբար «մարմնացնում են նրա թողած պատգամները»: Այս բանաստեղծը խորհառու հպարտ բացականչում է.

«Հրեն Ստալին... պողպատ ձեռքով երկրի դեկը ձեռքն առած՝  
Ղեկավարում, վարում է մեր կարմիր նավը դեպ առաջ.  
Սշակերտը մեծ ուսուցչի արժանավոր է զավակ —  
Արթուն պահակ մեր Միության՝ հսկող ամեն ժամանակ»:

Բոլշևիկ բանաստեղծն անմահ Լենինի «արժանավոր զավակի» կերպարի մեջ խորը հավատով տեսնում էր Սովետական հայրենիքի պայծառ զալիքը: Նա պարզ տեսնում էր, որ սոցիալիզմի կառուցման վիթխարի գործի դեկը մեծ Ստալինի «պողպատ ձեռքումն է», որ Ստալինը՝ հավատարիմ «աշակերտը մեծ ուսուցչի» հաստատորեն անշեղորեն ղեկավարում, վարում է սոցիալիզմի նավը՝ նեպի ստորջրյա խութերի վրայով, դեպի առաջ, դեպի այն ժամանակ դեռ հեռավոր հաղթության ափերը:

Դրանից մի տասնամյակ հետո (1936 թվին), պոեզիայի պայքարի ու հաղթանակի երգիչը մի հայացք նետելով մեր հայրենիքի անցած ճանապարհին, տեսավ, որ Սովետական հայրենիքը Լենինի մահից հետո վերընթաց ուղիով հասել է մեծագույն հաղթանակների, կենսագործելով Լենինի պատգամները, և դա՝ շնորհիվ նրա «արժանավոր զավակի», որ այդ տարիների ընթացքում հետևողականորեն կատարեց և շարունակում է կատարել իր տված նշանավոր երդումը՝ Սովետների 11 համագումարում: Այդ մասին է խոսում Հակոբյանի «Կրեմլի դահլիճում» ոտանավորը, ուր պատկերված է Առաջնորդի հանդիպումը ժողովրդի ներկայացուցիչների հետ: Կրեմլի դահլիճում, այդ հանդիպման ժամանակ, լավող ցնծագին բացականչությունների, արտագին օվիացիաների և ուրախ ձայների մեջ բանաստեղծն զգացել է մեր հայրենիքի հաղթական առաջընթացը: Այդ բանաստեղծության մեջ նա Ստալինին պատկերացնում է որպես մեծ հաղթանակներից նոր վերադարձած անպարտելի զորավարի, որին բանակը սալյուտ է տալիս երկիրը ցնցող հրանոթների համադարկերով:

«Իսկ նա ժպտում է, գոհ է, աներկբա  
երկրի աշտարակ ծաղկած վիճակից.  
Նախկին տաղնապը այլևս չկա —  
Ապահով՝ երկրի սահմաններն ու գիծ:  
Նվ դեմքը խրոխտ մեծն Լենինի,  
Որ լույսերի մեջ բեմումն է բազմած՝  
Նույնպես ժպտում է նման Ստալինի—  
— Վեց երգումն արդեն պատվով կատարած...»<sup>1</sup>

Հակոբ Հակոբյանից հետո, մեր պոեզիայում, հատկապես  
վերջին տարիների ընթացքում, Ստալինի գեղարվեստական կեր-  
պարը կերտելու իդեան ամենանվիրական ստեղծագործական իդեան  
է դարձել մեր բանաստեղծների ու ժողովրդական երգիչների հա-  
մար: Նրանք իրենց ժողովրդի հոգու անսպառ հարուստ հանքերը  
պեղելով՝ հանում են ամենաթանկագին մետաղը և անհուն հրե-  
վանքով կերտում են մեր ժամանակի մեծ մարդու գեղարվեստա-  
կան մոնումենտը հայկական պոեզիայում:

Հակոբ Հակոբյանից հետո մեր պոեզիայում մեծ Ստալինի  
կերպարի գեղարվեստական պատկերման նվիրական ձգտումով  
տոգորված բարձրարժեք գործեր է տվել կրկնակի շքանշանակիր  
բանաստեղծ Նայիրի Զարյանը:

Հանձարեղ Առաջնորդի դուշագնական կյանքն ու պայքարը  
բազմակողմանի արտահայտություն է ստացել Ն. Զարյանի մի  
շարք պոեմներում ու լիբրետական բանաստեղծություններում:  
Առաջինը, ինչպես վերևում հիշեցինք, նրա համաժողովրդական  
համբավ ստացած հիանալի «Ստալին» բանաստեղծությունն է,  
գրված Սովետական Հայաստանի 15-ամյակի առթիվ՝ 1935 թ.  
վերջերին: Բարձր արվեստով ու խորը ոգեշնչմամբ գրված այդ  
բանաստեղծության մեջ՝ վառ արտահայտիչ պատկերներով ու  
համեմատություններով, բանաստեղծն արտահայտում է Ստալինի,  
որպես ժողովուրդների առաջնորդի մեծությունը, որպես իր մեծ  
նախորդների՝ Մարքսի, Էնգելսի ու Լենինի գործի հանձարեղ շա-  
րունակողի ու անշեղ զարգացնողի, որպես բոլոր սովետական ժո-  
ղովուրդների, այդ թվում և հայ ժողովրդի ազատարարի՝ անմահ  
Լենինի հետ միասին:

<sup>1</sup> Հ ա կ ո բ Հ ա կ ո բ յ ա ն — Ը ն ա ի ռ Էրկեր, 1936 թ., էջ 77—78:

Մեծ առաջնորդի կերպարը տրված է համամարդկային պատ-  
մական հեռանկարի մեջ՝ Մարքսի, Էնգելսի ու Լենինի հետ միա-  
ցած, որպես մարդկության «հանձարի արեգնային չորրորդու-  
թյուն», որի լույսը, ասում է բանաստեղծը, երբեք՝

«Զի խավարի ծիրանավառ հորիզոնում պատմության»:

«Կըծավարվի նա անասման, հավերժաբար կարեի,

Նվ կպատռի մըշուշն անցյալ և ապագա դարերի»:

Բանաստեղծը նշում է, որ այդ «արեգնային չորրորդությու-  
նը» ստեղծագործական անհուն ու անսպառ ոգեշնչման աղբյուրը  
կլինի ներկա և հետագա բոլոր դարերի անթիվ Հոմերոսների ու  
Ֆիրդուսիների համար, որոնք երգելով չեն սպառի նրանց մե-  
ծությունն անհնար:

«Կերգեն բոլոր լեզուներով բանաստեղծներ նորանոր,

Կըտան դարերը ձեզ վայել հուշարձաններ փառավոր»:

Բանաստեղծն այն գաղափարն է արտահայտում, որ մինչ-  
մարքսյան-մինչ լենինյան-ստալինյան դարաշրջաններում, թեև  
շատ ու շատ հերոսներ են երգվել-փառաբանվել, բայց մարդ-  
կությունը միշտ ավելի ու ավելի էր տառապում դասակարգային  
հասարակությունների խավար զնդանում, ու դեռ երբեք՝ «տա-  
ռապած մարդու համար չէր ճառագել մի արև»: Նվ անհ մարդ-  
կության պատմության մինչ այդ խավար հորիզոնում բոցավառ-  
վեց Մարքսի-Էնգելսի-Լենինի-Ստալինի «արեգնային չորրորդու-  
թյունը տիտան», որի աշխարհավերափոխման ամբողջ ուժն ու  
հզորությունը, Լենինից հետո, մարմնացած է Ստալինի մեջ:

«Մեռավ Լենինն, ու պատմությունը մի վայրկյան կարկամեց,

Շողում էիր հորիզոնում դու արեի նրման մեծ,

Ն ա ի թ ո Ր Շ ն ե ռ ի դ հ ը զ ո Ր լ ու յ ա ո վ և ք ո լ ու յ ա ո վ ս ե փ ա կ ա ն

Տանում ես դու երկիրն անա դեպի պայծառ ապագան»:

Այնուհետև բանաստեղծը պատկերում է մեր հանձարեղ Ա-  
ռաջնորդի և ժողովրդի մտերմական, հարազատ կապը, այն, որ  
Առաջնորդը ժողովրդական մասսաների աշխատանքի ու պայքա-  
րի, նրանց ստեղծագործական ոգեշնչման կենսարար աղբյուրն է:

<sup>1</sup> «Ստալինը հայ ժողովրդի ստեղծագործության մեջ», 1939 թ., էջ 39:



որ ուժ, թե ու թուիչք է տալիս նրանց, նոր կյանքի կառուցման մարտերում:

«Անունդ խոր երգի նրման մարդկանց հոգին ողորում,  
թեևր տալիս ու հիասքանչ հերոսության է մղում:  
Եվ իմ չքնաղ Հայաստանի ծաղկած լծաղ լեռներում  
իր նոր աշխարհն է կառուցում քեզնով լեցուն մի սերունդ»:

## V

Ստալինին նվիրված բանաստեղծական մեր բոլոր ստեղծագործությունների մեջ առանձին մեծ արժեք ունի Նայիրի Զարյանի այն ծավալուն գործը, որ նվիրված է մեր Առաջնորդի դյուցազնական կյանքի ու պայքարի ցարիցինյան էպոպեին: Այդ գործը հեղինակն իրավամբ վերնագրել է՝ «Դյուցազնագիրք (ցարիցինյան դրվագներ)»:

Իր իդեական-ստեղծագործական հղացումով և իր գեղարվեստական կատարման ձևով ու ծավալով (ինչպես վկայում են պոեմի մինչ այժմ լույս տեսած գրքերները) Զարյանի «Դյուցազնագիրք» պոեմը մեծագույն նվաճումներից մեկն է լինելու ոչ միայն հայկական պոեզիայում, այլև Միութենական սովետական պոեզիայում:

«Դյուցազնագիրքը» հերոսական պոեմ է և իր բնույթով ու գեղարվեստական կատարումով՝ թերևս նախատիպերից մեկը սօցիալիստական դյուցազնապոեմի, որ ստեղծվում է մեր պոեզիայում:

Բանաստեղծն իրեն խնդիր է դրել մեր ռեվոլյուցիայի հաղթանակի ամենահերոսական էպիզոդներից մեկի՝ Ցարիցինի պաշտպանություն էպոպեի՝ պատկերումով կերտել մեծ Առաջնորդի գեղարվեստական կերպարը:

Պոեմի լույս տեսած հատվածները ցույց են տալիս, որ բանաստեղծն իդեական-ստեղծագործական մեծ ընդհանրացումներ է կատարում, այնպես, որ ցարիցինյան էպոպեի կոնկրետ պատկերման մեջ ցուլանում է մեր հայրենիքի հերոսական պատմության սովյալ շրջանն իր հիմնական գծերով, պատմական այն իրադրություններով, որ ապրում էր նորածին սոցիալիստական երկիրը քաղաքացիական պատերազմի շրջանում:

Ընթերցողի աչքի առաջ վառ պատկերներով վերակենդանա-

նում է մեր ռեվոլյուցիայի այդ տառնապալից, բայց և դյուցազնական գործերով լի էպոպեան, որի պատմական փոնի վրա խոյանում են Լենինի և Ստալինի տիտանական կերպարները օրգանական միասնությունում, բայց ամեն մեկն իր մեծ անհատականություններով՝ իր հանճարի սեփական լույսով, մեր ռեվոլյուցիայի հաղթանակը կազմակերպելու և իրականացնելու գործում:

Ձեռնարկելով Ստալինի դյուցազնական կյանքի պատկերման գործին, բանաստեղծն զգում է այդ գործի անսահման մեծությունը, վիթխարիությունը, լրջությունը և իր բանաստեղծական կարողությունը համեմատում է այն ճանդուկի ուժի հետ, որը փորձում է իր փոքրիկ թևերով՝ կաթիլ առ կաթիլ օվկիանոսը տեղափոխել...:

Պոեմի նախերգանքում, բանաստեղծը մեծ ընդհանրացումներով նկարագրում, պատկերում է ընկեր Ստալինի մանկությունը, դպրոցական տարիները, ապա նրա ընդհատակյա հերոսական պայքարն Անդրկովկասում, ուր նա պրոլետարական կռիվի բոլշևիկյան ջոկատներն էր ստեղծում և նրանց պատրաստում Հոկտեմբերյան մարտերի համար: Նկարագրված է ընկեր Ստալինի՝ բանտի, աքսորի տարիների պայքարն ու աշխատանքը Հոկտեմբերի նախօրեին, երբ ընկեր Ստալինն իր տիտանական կամքով, Լենինի հետ միասին, հավաքում էր «ցրիվ եկած գնդերը մեր բանակի»: Այնուհետև Հոկտեմբերյան հաղթանակը, որից հետո՝ «ահա քաղաքացիական կռիվների էպոպեն» է պատկերվում, այն տարիները, երբ «սովետների երկիրը՝ ժանտ ոսոխների օղակումն էր, և երբ հղի էր վտանգով» ռեվոլյուցիայի հանճարեղ զորավարի «կյանքի ամեն մի րոպեն»:

«Որհուրդների երկիրը՝ ժանտ ոսոխների օղակում,  
Ամեն դյուցազն խլուղություն,  
Եվ սով ամեն քաղաքում:  
Շողում էր դու, որպես շանթ, հորիզոնից հորիզոն,  
Մոսկվայից Դոն,

Դոնից Պիտեր,

Եվ Ռալայից

Ելի Դոն,

Շամփրում բոլոր ոսոխներին

Գեներալներն ըսպիտակ

Փախչում էին խուճապալար քո պողպատե դարկի տակ:

Եվ ուղարկում էր քեզ Լենինն այն հակառակները դաժան,

Ուր հեղափոխութիւնն ապրում էր անավոր ճգնաժամ:  
Մերկացրելը դու անխնա ծրագիրը սե պարտութիւն,  
Որ պատրաստել էր Հոկտեմբերը վաճառող նենգ Հուդան:  
Դու կամիր զորքը հաղթութեան անխափ ուղին հանեցիր,  
Ու Դենիկինը կործանվեց բանակներով ցանուցելը:  
Դու Մոսկվային, Պետրոգրադին ու ողջ երկրին ավել հաց,  
Ապրեց մանուկը հաղթութեան, և հայր Լենինը ժպտաց<sup>1</sup>:

Անհուն խանդավառութեամբ լցված բանաստեղծը երգում է,  
նկարագրում մեծ Ստալինի հերոսական-դյուցազնական կյանքի  
պատմութիւնը, բայց նա ամեն քայլափոխում զգում է, որ ինքը  
մի ճնճղուկ է անհուն ու անեզր օվկիանոսի հանդեպ և այդ գի-  
տակցութեամբ էլ մտորում է, նկատելով՝

«Հյուսել անմահ քո էպոպեն —  
Դժվար է շատ, ուժից վեր,  
Պետք է ծնվի մեր Ֆիրդուսին  
Կամ նոր, կախարդ մի Հոմեր:  
Դժվարութեան հազար լեռներ դու հարթեցիր անդադար,  
Կյանքդ դարձավ դյուցազնական դրվագների լեռնապար:  
Քո գործերի ամեն դրվագ, ամեն կտոր անասան  
Կվայելեր մի հերոսի, որպես փառքի հուշարձան»:

Առաջնորդի կյանքի «դյուցազնական դրվագների լեռնա-  
պարն» է ծառացել մեր պոետի ստեղծագործական ամբողջ առաջ  
և, ամենից առաջ՝ այդ «լեռնապարի» ցարիցիկյան էպոպեն, որի  
բանաստեղծական-էպիկական պատկերն է փորձում տալ Զարյանն  
իր այս պոեմում:

«Ան կանգնած է իմ առաջ,  
Որպես Մասիս բարձրաբերձ,  
Տարիցիկյան քո էպոպեն  
Նվ ես  
Անխնայ բանաստեղծ,  
Դեպի կատարն եմ մագլցում՝  
Սրտումս դող ու կորով՝  
Մեր հայրական վրպերգութեան բազմադարյան ոտքերով»:

Ստեղծագործական խիղախութեան այդ վեհ ճանապարհին  
մեր բանաստեղծը «դժվարութեան հազար լեռներ» պիտի հարթի,  
որպեսզի հասնի իր խիղախ ձևաւարկման հաղթանակին:

<sup>1</sup> «Մոսկովային գրականութիւն», 1939 թ., № 7, էջ 6:

Բացի «Ստալին» բանաստեղծութիւնից և «Դյուցազնապար»  
պոեմից՝ իր մի շարք այլ գործերում ևս Ն. Զարյանը զժպտում է  
Ստալինի կերպարը, երգում մեր հանճարեղ Առաջնորդի մեծու-  
թիւնը, իմաստութիւնը, սովետական ժողովրդի անասանման սերն  
ու նվիրվածութիւնը Ստալինին, սոցիալիզմի գործին: Ամենու-  
րեք («Ռուշանի քարափը», «Կոլումբներ», «Դոկորես և Մարգարիտ»  
և այլն) շքանշանակիր բանաստեղծի ստեղծագործական ամբողջ  
առաջ իր ամբողջ վեհութեամբ կանգնած է մեր մեծ Առաջնորդի  
անչափելի հարուստ կյանքի «դյուցազնական դրվագների լեռնա-  
պարը», որի ստորոտներից դեպի վեր է մագլցում նա՝ «սրտումս  
իր դող», բայց և կորով ստեղծագործութեան:

Այդ երջանիկ ու սրբազան գողով, միաժամանակ և ստեղ-  
ծագործական կորովով են հանդես գալիս մեր բոլոր մյուս բա-  
նաստեղծներն էլ, ինչպես և մեր աշուղներն ու ժողովրդական  
երգիչները՝ մեծ Ստալինին նվիրված իրենց ստեղծագործութիւն-  
ներում:

Ահա շքանշանակիր բանաստեղծ Գեղամ Սարյանի գեղեցիկ  
բանաստեղծութիւնը՝ գրված մեր պարտիայի 18-րդ համագու-  
մարի առթիւ<sup>1</sup>: Բանաստեղծը, ոգեշնչված Լենինի-Ստալինի փա-  
ռապանձ պարտիայի համագումարի պատմական նշանակութեան  
գաղափարով՝ այն պատկերում է որպես մեր սոցիալիստական  
հայրենիքի նոր գարունը, որը բաց է անում ժողովուրդների  
առաջնորդ ընկեր Ստալինը:

«Բացեք ռադիոները — այսօր մեր աշխարհում —  
Գարունն Առաջնորդն է բացված հայտարարում:  
Նա հայացքը հառած նոր օրերի հեռուն,  
Ամեն սրտում դառնան արևներ է վառում:  
Բերում է մեր երկրին և՛ հաղթանակ, և՛ սեր,  
Ճնշված ողջ մարդկութեան՝ նոր օրերի հուշեր:  
Նվ ողջ ժողովրդի ատելութեամբ անհուն՝  
Ծաղրի ավիւններով խոցում է թշնամուն:  
Բացեք ռադիոները — այսօր մեր աշխարհում —  
Գարունն Առաջնորդն է բացված հայտարարում»:

Հրաշալի է տաղանդավոր բանաստեղծի ստեղծած պատկերը՝  
և խորն իմաստով՝ «մեր աշխարհում գարունն Առաջնորդն է բաց-

<sup>1</sup> «Գրական թերթ», № 9, 1939 թ., մարտի 15:

ված հայտարարումը: Սրանով տաղանդավոր բանաստեղծն այն միտքն է մարմնավորում, որ Լենինի-Ստալինի հերոսական, պանծալի պարտիայի յուրաքանչյուր հերթական համագումար մի նոր գարուն է մեր մեծ հայրենիքի բազմազգ բազմամիլիոն ժողովրդի համար, նոր, ավելի մեծ հաղթանակների ու ցնծության գարուն, որ բացվում է մեր իմաստուն Առաջնորդի հանձարի արևով:

Արժեքավոր բանաստեղծական գործ է նույն շքանշանակիր բանաստեղծի՝ Գեղ. Սարյանի՝ նաև «Սոսք ընկեր Ստալինի վաթսուներամյակի առթիվ» լիրիկական ոտանավորը, ուր Ստալինը պատկերվում է որպես «բռնության աշխարհը» «հիմքից փոխող» և աշխատավոր ժողովրդի հարազատ հայր:

«Ապրում եմ ես աշխարհում,  
Երբ ամենուր ես դու,  
Երբ աշխարհի սրտերում  
Սիրով հիշվում ես դու.  
Երբ քո ամբողջ հմայքով  
Ամեն, մի հոգու  
Վաթսուներամյա ժպիտով  
Հանդարտ նայում ես դու»<sup>1</sup>:

Իր իմաստալի պատկերավորությամբ հիանալի է մեր պոեզիայի բազմավաստակ վարպետի՝ Ավ. Իսահակյանի «Մեծ Ստալինին» վերնազրով բանաստեղծությունը՝ գրված Առաջնորդի 60-ամյակի առթիվ: Ահա այն ամբողջությունը.

«Բարձրացրել ես դու պատմության սուրն անկղ  
Երկրի վրա՝ ոճիւրներով ծանրաբեռ,  
Ստեղծագործ խոսքդ հրդոր և անշեղ  
Ողջ աշխարհի սրտում կրակ է վառեք:

Ելան ծովերն ու ծովերին միացան,  
Դու վարեցիր ժողովուրդներ բազմահեծ  
Ազատության, արդարության հանգրվան,  
Նոր մարդկության մի նոր աշխարհ լուծընկեց:

Բռնկվել է արյան հեղեղը կրկին,  
Վրնջում են նսույգները երկաթի,

Սակայն սանձը մրրիկների զայրագին՝  
Դու բռնել ես քո կուռ ձեռքում պողպատի:

Եվ տանում ես հաղթանակից հաղթանակ  
Հայրենիքը մեր անեղբերք, աննկուն.  
Քեզ անսպառ կամք ու կորով, երկար կյանք,  
Ո՛վ մեծ գործի մեծ առաջնորդ իմաստուն»<sup>1</sup>:

Այս ոտանավորը, անկասկած, մեր պոեզիայի ստալինյան ցիկլի մարգարիտներից է և իր՝ բանաստեղծի տաղանդի շողարձակման նոր արտահայտություններից մեկը:

## VI

Մեր պոեզիայում, ինչպես և ֆոլկլորում, ուշագրավ մոտիվներից է սովետական երկրի կնոջ երջանկության պատկերումը, որը բնականորեն կապվում է ընկեր Ստալինի անվան հետ:

Մեր երկրի ու ժողովուրդների սոցիալիստական վերածնունդի ամենանշանակալից արտահայտություններից մեկը կնոջ սոցիալական-իրավական ու տնտեսական ազատագրումն է, որն առանձնապես արտացոլվում է մեր պոեզիայի ու ֆոլկլորի լենինյան-ստալինյան ցիկլում:

Անցյալում կինը թեևրը խուզած թռչունի էր նման, փակ վանդակում: Նա երազում էր ազատ կյանքի մասին, կյանքում թռչելու մասին, բայց ով էր նրան թեևր տալիս: Կնոջ այդ ստերկական վիճակն էր անհուն վիշտ պատճառում հայ մեծատաղանդ բանաստեղծուհի Շ. Կուրդինյանին, որը լենինյան ազատ արձվի բերանով տխրությամբ հարցնում էր «ձորի միջին տեսած աղջկան».

«Յարար թռչել հեշ չգիտես,  
Քեզ ով ծնեց առանց թե.  
Յարար կյանքում հեշ ուզած չես  
Օգուտ թռչել միշտ թեթև...»:

Աղջիկը-կինը «թռչել հեշ չգիտեր», նա ծնվում էր գրեթե «առանց թե» ու թեև կյանքում նա միշտ երազում էր թռչելու մասին, բայց թռչել չէր կարող: Իսկ այժմ «խորհրդային մայր հողի աղջիկներն անձնուրաց», «ուր կամենա երկիրը» կարող են

<sup>1</sup> «Գրական թերթ», № 35, 1939 թ., դեկտեմբերի 21:

<sup>1</sup> «Գրական թերթ», № 35, 1939 թ., դեկտ. 21:

խիզախաբար ճախրել օգուժ, «որպես հանդուգն արծիվներ» — ասում են բանաստեղծ Աշոտ Գրաշիի (Գրիգորյանի) պատկերած սավառնորդուհիները, որոնց արծվային թռիչքների ուժն ու խիզախությունն Ստալինի անունն է, նրա հայրական հոգատարությունը: Ստալինն է սովետական երկրի աղջիկներին-կանանց՝ թեք տվել կյանքում և օգուժ ազատ թռչելու համար: Ահա թե ինչու Ստալինին են իրենց խոսքն ուղղում, օրինակ, սովետական սավառնորդուհիները, որոնք կազմում են մեր հայրենիքի կանանց ստալինյան սերնդի առաջավոր ջոկատը:

«Հնչում է մեր շուրթերին,  
Շողջողում է մեր սրտում  
Արևային անունը  
Առաջնորդի խմատուն» —

ասված է երիտասարդ բանաստեղծ Աշոտ Գրաշիի «Սավառնորդուհիների երգ»-ում<sup>1</sup>:

Իր ստեղծագործական մտահղացումով արժեքավոր է շքանշանակիր բանաստեղծ Գեղամ Սարյանի «Գեղջկուհու երազը», գրված 1937 թ. ապրիլի վերջերին<sup>2</sup>: Այս բանաստեղծությունը պատկերում է կոլխոզական կանանց հոգեկան աշխարհը, որը նոր բովանդակությամբ է լցվել կոլխոզական կարգերի հաղթանակի, գյուղի սոցիալիստական վերափոխման համաշխարհային-պատմական հաղթանակի շնորհիվ:

Սոցիալիստական գյուղում ստեղծվել է արդեն նոր կնոջ տիպարը: Գյուղում Մարիա Դեմյենկոների ու Պաշա Անգելինաների սերունդն է աճում Ստալինյան արևի տակ:

Թումանյանի Վարդիշաղի և Մանիշակի դարն անցել է, նրանց հաջորգած սովետական սերունդը բոլորովին նման չէ իր նախորդին: Կոլխոզուհու մինչև իսկ երազի աղբյուրն ու բովանդակությունն էլ տարբեր է «Անուշ»-ի՝ չար երազների կատարման սարսափով բռնված գեղջկուհիների հոգեկան աշխարհից:

Կոլխոզական գեղջկուհին արթուն ժամանակ խորն զգալով իր կյանքի երջանկությունը և անհուն սեր տածելով այդ երջանկությունն ստեղծողներին՝ Լենինի ու Ստալինի նկատմամբ, իր

սրտում փայփայում է նվիրական իղձ՝ նրանց հանդիպելու, սեփական աչքերով նրանց տեսնելու և պատմելու կոլխոզական կյանքի ապահովությունն ու երջանկությունն մասին:

Ահա այդ ապրումների ազդեցություն տակ բանաստեղծ Գ. Սարյանի պատկերած գեղջկուհին գիշերը երազ է տեսնում, թե ինչպես ինքն ու իր աղջիկը — Ջարեն, իրենց կոլեկտիվի արտերում՝

«Անձեր գեղին արտերում»

հասած ցորեն էին հնձում և հանկարծ նրանց այցի են գալիս Լենինը, ապա Ստալինը — զրույց անում մոր ու աղջկա հետ: Գեղջկուհին անհուն հրճվածքով պատմում է Ստալինին այն նոր ու երջանիկ կյանքի մասին, որ ստեղծվել է գյուղում, Լենինի և Ստալինի շնորհիվ:

«Ստալինն էլ հայրաբար  
Նայում է մեզ խինդով լի,  
Նստից էլ անհամար  
Բազմություններ են գալի  
Ամեն ազգի ու գույնի»:

Կոլխոզական գեղջկուհու երազում սովետական ժողովուրդներին ու մեծ Առաջնորդի միասնությունն է պատկերանում և այն, թե ինչպես Ստալինը

«Հետո ասում է հանդարտ  
— Կանաչ սարն ենք գնում մենք,  
Որ չի տեսել ոչ մի մարդ  
Աշխարհի մեջ գեռ երբեք,  
Երջանկության սարն է նա —  
Կանաչ սարն այդ գեղեցիկ...»:

Խաչ Առաջնորդին հետևող բազմությունները

«Երգում էին բազմազան  
Լեզուներով ներդաշնակ,  
Երգում էին նրան փառք,  
Երգում էին նրան սեր,  
Երգում էին նրան կյանք,  
Ամեն բարիք ու մաղթանք...»:

<sup>1</sup> Աշոտ Գրաշի — «Քնարական», 1939 թ., էջ 164:

<sup>2</sup> «Դրական թերթ», № 13, 1937 թ., մայիս 1:

Իսկ մենք—ավարտում է իր իմաստավոր ու հուզիչ երազը գեղջկուհին՝

«Գնում էինք անդադար,  
Զորս կողմ կանաչ, ծաղիկներ  
Ու պարտեզներ անհամար,  
Ու նայում էր դիմացից  
Մեզ մի շքնաղ կանաչ սար...»:

Կոլխոզական կնոջ վառ հավատը մեր հայրենիքի է՛լ ավելի երջանիկ դալիքի նկատմամբ, հավատը Լենինի-Ստալինի գործի, Կոմունիզմի հաղթանակի մասին, հիանալի կերպով տրված է շքանշանակիր բանաստեղծի այս ոտանավորում:

Ահա մի այլ օրինակ. շնորհալի բանաստեղծուհի Ադաֆու «Մայրը» վերնագրով գեղեցիկ ոտանավորը: Բանաստեղծուհին մեր լեռնային գյուղերից մեկում այցելում է «մի բարի պառավ կնոջ», «մազերը ճերմակ», բայց «սիրտը գարուն՝ անսպառ սիրով լեցուն»: Մինուճար տղայի մայր է նա, իսկ տղան, որպես «կարմիր պարտիզան», քաղաքացիական կռվի ժամանակ «թողեց տուն ու տեղ և ջանել խիզան ու կռիվ գնաց թշնամու վրա», գնաց նորածնունդ Սովետական հայրենիքը պաշտպանելու, բայց այլևս չվերադարձավ տուն, զոհվեց հանուն հայրենիքի: Եվ ահա, իր մինուճար զավակին կորցրած այս ծերունի մայրը այժմ դժբախտ ու վշտահար չի զգում իրեն, նրա «սիրտը թեև ցավել է վերքից», բայց հետո բուժվել ու վերքը փակվել է արդեն, որովհետև նա ապրում է Կոլխոզական ունեոր ու երջանիկ կյանքով: Նա իր այցելուին հանձնարարում է Ստալինին հանդիպելիս պատմել, որ ինքը հպարտ է իր կորցրած զավակի հերոսական մահով:

«...Թե հանդիպեցիր  
Էն մեծ, մեծ մարդուն, անունն Ստալին,  
Ասա, որ թեև ցավով ծնեցի,  
Բայց սիրով տվեցի պարտիզան բալին»<sup>1</sup>:

Այստեղ սովետական հայրենասեր կնոջ՝ մոր կերպարն է տրված, արտահայտելով սոցիալիստական հայրենիքի պաշտպանության համար զոհված պարտիզան զավակների բոլոր մայրերի երջանկություն ու հայրենիքի սերը:

<sup>1</sup> Ա. Գ. Գ. — «Բանաստեղծություններ», 1936 թ., էջ 50:

Բանաստեղծուհի Ադաֆուն իր «Ստալինն ու Ելենան»<sup>1</sup> լիբրիկական ոտանավորում մի այլ պատկեր է տալիս. նա պատմում է Ելենա անունով մի «թխորակ աղջկա կյանքի հեքիաթը», որի մեջ արտացոլվում է սովետական անթիվ Ելենաների անցած ուղին «կյանքի հատակից» մինչև բարձրագույն երջանկության կատարը՝ հանդիպումը ժողովուրդների առաջնորդի հետ:

«Անտեր որը էր նա մի օր, կորցրած մոր սերն անգին,  
Թառամում էր անարև ընկած հատակը կյանքի»—

Իսկ հետագայում, սոցիալիզմի հաղթանակի շնորհիվ,

«Արվաշայի ափերից մինչև Կրեմլ նա հասավ,  
Մեծ Կոբայի սիրառատ գգվանքներով լիացավ»:

Այդպիսով, երբեմնի «անտեր որը» աղջիկը կյանքի հատակից վեր է բարձրանում, հասնելով ժողովուրդների Առաջնորդի՝ սոցիալիստական կյանքի արևի մոտ:

Բանաստեղծուհուն անսահման ուրախ հուզմունք է պատճառում այն, որ այդ երբեմնի որբուհին, այժմ Սովետական Հայրենիքի առաջավոր դուստրերից մեկը դարձած՝ հասել է Կրեմլ:

«Ու գլուխն իր գանգրահեր հենած մեր հոր լայն կրծքին,  
Տեսեք որքան երջանիկ նա ժպտում է ամենքին»:

«Քո այդ ուրախ ժողտացող արևափայլ աչքերում», սրտառուչ բացականչում է բանաստեղծուհին, — «ես իմ բերկրանքն եմ զգում, երջանկությունն իմ անշեջ»:

Շատ ինքնատիպ է բանաստեղծ Ադատ Վշտունու «Ստալինի գորգանկարը» բանաստեղծությունը:

Բանաստեղծը վարպետութամբ պատկերում է նկարիչ գորգագործ մի աղջկա կերպարը: Ընթերցողի աչքի առաջ կենդանի կանգնում է սովետական երկրի գորգագործ աղջիկը, որ անհուն խաղաղավառութամբ, անսահման «հրճվածությամբ, երգով ու սիրով» մեր ժամանակի մեծ Մարդու նվիրական պատկերով գեղեցիկ խալին է հյուսում և որպես համեստ նվեր իր մի սրտառուչ նամակով ուղարկում է նրան—հարազատ Ստալինին:

<sup>1</sup> «Գրական թերթ», 1938 թ., № 29:

Հիանալի է գորգի (խալիի) հյուսվածքի նկարագրութունը  
և արտահայտումն այն երջանկության ապրումների, որ զգում է  
գորգագործ աղջիկն իր սրտագին նվերն ավարտելուց հետո:

«Թեև երբևէ լաջվարդ ու նարինջ, ոսկեվառ, կանաչ, երկնաշող,  
իմ երկրի նման ծիծաղկոտ, գույներով անջինջ ու նախշով,  
Քեղդյանի վերա գործեցի, գործեցի ես խառ մի խալի,  
Քնդողի ձութեր չորս քուր՝ հաշարաշ, մուսկատ, մըսխալի,  
Տերեւներ կանաչ թփերի, ծաղիկներն երկրիս ձորերի,  
Խնդության գույները շողուն՝ ունեւոր, ուրախ օրերի:  
Իմ խալին անա լըրացած, գույներով փարթամ ու խոսուն,  
Իմ երկրի ձևերն ու հույզերն արեւի հունով են հոսում:  
Եվ անա արեւ շողարձակ՝ խառ խալու վրա, հմայուն,  
ՄՏԱԼԻՆ — իմ հայրն է ժպտուն աչքերով և ինձ է նայում:  
Քերգյանից խալին հանեցի, հրճվանքով, երգով ու սիրով,  
Սրեշող սրախ պուրակում խնդության խոսքեր հյուսելով»:

Մեր պոեզիայի ստալինյան ցիկլում կանանց ազատ ու եր-  
ջանիկ կյանքը պատկերող ուրիշ շատ ստեղծագործություններ  
էլ կան, որոնց այժմ չենք կարող անդրադառնալ:

## VII

Ժողովրդի և Առաջնորդի միջև եղած սրտագին մտերմու-  
թյան պատկերումը մեր պոեզիայի, ինչպես և ժողովրդական  
ստեղծագործության հիմնական հմայիչ մոտիվներից մեկն է: Բա-  
նաստեղծներն այդ մտերմությունն արտահայտում են բազմա-  
զան ձևերով և այն պատկերելու ձևերի որոնման մեջ հղանում  
են գեղեցիկ և հուզիչ ստեղծագործություններ:

«Համայնական անուշ գինով քո կենացն եմ խմում ես,  
Իմ հույզերի ոսկե թասով քո կենացն եմ խմում ես,  
Դու իմ երգի անմար արեւ, դու իմ մուսան հրաշունջ,  
Հայրենիքիս անդին սիրով քո կենացն եմ խմում ես»:

Մեր, առայժմ շատ երիտասարդ, բանաստեղծներից մեկի  
(Սաքո Սարգսյան) այս գեղեցիկ քառյակը ժողովրդի և Առաջ-  
նորդի կապն ու մտերմությունն արտահայտում է նոր, սոցիա-  
լիստական մարդուն հատուկ հոգեբանությամբ: Բանաստեղծն

Առաջնորդի կենացն է խմում «համայնական անուշ գինով», իր  
«հույզերի ոսկե թասով» և «հայրենիքի անգին սիրով»: Այս նոր  
ապրում է, նոր մարդու նոր հոգեկան աշխարհին հատուկ անհա-  
տական զգացում, որի մեջ ցոլանում է սովետական ժողովրդի  
նոր հասարակական հոգեբանությունը: Իսկ այդ հոգեբանության  
ամենարժեքը գիծը ներքին-օրգանական կապն է սոցիալիստա-  
կան հայրենիքի ու նրա Առաջնորդի հետ, անհուն նվիրվածու-  
թյունը հայրենիքին և Առաջնորդին:

Ահա բանաստեղծ Սարմենի «Նվեր» լիրիկական բանաստեղ-  
ծությունը, որ պատկերում է հայ ժողովրդի նվիրվածությունը  
մեծ Առաջնորդին և ժողովրդի ու Առաջնորդի հարազատ մտերմու-  
թյունը: Ժողովրդի զավակը պատվիրակ է գնում Մոսկվա կրեմլ՝  
«Արեւ Առաջնորդի մոտ» և անա նա գիմում է իր երկրի սարե-  
րին, դաշտերին ու ջրերին, ժիր մանուկներին և իր մորը՝ Ժո-  
ղովրդին հարցում անելով, թե ինչ են տալիս նրանք իբրեւ թան-  
կագին նվեր տանելու նրան—մեծ Առաջնորդին:

«Իմ լանջերին անվերջ հնչող  
Երջանկության երգ ու տաղից  
Փնջիւ երգեր արեաշող—  
Ահա ընծաս երախտալից»—

պատասխանում է «Արագածը, հպարտ ու վեհ»: Իսկ Սևանա լիճը  
չքնաղ՝

«Իմ ջրերից ծնված լույսի  
Շողողացող շուշաններից  
Դու անթառամ մի փունջ հյուսիւր,  
Սրախ նվեր տաւ ինձանից»:

Արարատյան բերրի դաշտն առաջարկում է պատվիրակին.

«Ընտրիր իմ ծով բարեքներից  
Որը կուգես և առ ու տար...»:

Երկրի ժիր մանուկներն իբրեւ նվեր իրենց սիրտն են առա-  
ջարկում Առաջնորդին, իրենց անհոգ ծիծաղը, ցնծությունն ու  
երջանկության երգերը:

Իսկ մայր ժողովրդի թանկագին նվերն՝ իր անգին դա-  
վակն է.

«Դու ինքդ քեզ տար ինձանից,  
Որպես նվեր արեգակին»—

ասում է ժողովուրդը Կրեմլ գնացող իր պատվիրակ ուղուհուն:

«Բայց գնա դու որպես հերոս,  
Հերոսական Կրեմլը վառ,  
Այն ժամանակ, իմ աչքի լույս,  
Քեզ կժպտա Արևն անմար»:

Բանաստեղծ Վեսպերն էլ նվիրարեցրում է Առաջնորդին մեր  
համայնական դաշտերի հնձի «առաջին խուրձը».

«Այեծածան մեր արտերի  
Պուրձն առաջին քեզ եմ բերում,  
Ոսկի ընծան մեր դաշտերի,  
Որ քո սիրովն է վարարում»:

«Ոսկի ընծան մեր արտերի  
Ընդունիր դու, հայր իմ անգին,  
Եվ թող ծլի ու դալարի  
Հայրենիքը մեր թանկագին»:

Առաջնորդի և ժողովրդի միասնությունը, Առաջնորդի շուր-  
ջը ժողովրդի համախմբվածությունը մի հիանալի իմաստալի  
բանաստեղծական պատկերով է արտահայտում՝ արագորեն ղեպի  
իր գրական հասունությունը քայլող բանաստեղծ Աշոտ Գրաշին  
(Գրիգորյան), իր հետևյալ ութնյակով:

«Ո՛հ, երկրագունդը մեր իմաստուն  
Առանցքի շուրջն է իր պտտվում,  
Իսկ մենք՝ իմաստուն առաջնորդի,  
Որ վարում է մեզ անդուլ մարտի,  
Մակընթացներով ղեպի խաղաղ  
Նզկերքներ, հերկեր չեղած, չքնաղ,  
Գաղաթներ և՛ սեղ, և՛ կուտական,  
Հաղթանակներով մեր պատված»<sup>1</sup>:

Առաջնորդի և ժողովրդի մտերմությունն ու միասնությունն  
է պատկերում նաև բանաստեղծուհի Ադաֆու «Մտալին» գեղեցիկ  
բանաստեղծությունը:

Մտալինն ապրում է ժողովրդի սրտում, և ժողովուրդն էլ՝  
Առաջնորդի սրտում. ժողովուրդը երջանիկ է, իսկ Առաջնորդն էլ  
իր մեջ մարմնավորում է ժողովրդի երջանկությունը—այս իդեան  
է դրված Ադաֆու այդ բանաստեղծության հիմքում:

«Քո սիրով են լցված հիմա մեր շենքերը արևադուն,  
Դաշտերը մեր ծաղկալիքի, քաղաքները դրդացող,  
Մեր սրտերի մեջ ենք զգում մենք սիրտը քո միշտ բաբախուն,  
Ու ժպտը քո հայրական, որպես շալլ արևի շող:  
Մանուկը, որ օրորոցից նոր է ժպտում ծագող կյանքին,  
Ու ծերունին, որ կյանքն ապրած մայրամուտ է գնում արդեն,  
Մեկը քո սերն է օրոնում, ինչպես ծիր՝ արեգակին,  
Մյուսը գոհ՝ քո տվածով, ցնծությամբ է քայլում ճամբեն»:

Եվ ապա՝

«Առաջնորդն ես դու մեր խիզախ ու ընկեր սիրազորով,  
Միլիոնների մեջն ես առմիշտ, միլիոնների գլուխն անցած»—

ասում է բանաստեղծուհին և նշում, որ Առաջնորդի ու միլիոն-  
ների այդ ներթափանցված միասնության շնորհիվ սովետական  
ժողովուրդը դարձել է հերոսական և ծնում է նոր Աքիլլեսներ,  
Դավիթներ ու Ջոհրաբներ.

«Դու հաբեցիք հերոսության ճամբաները արևաշող,  
Բաջությունը հեքիաթներից՝ մարմին առավ ու մտավ կյանք»:

Այսպիսով՝ Առաջնորդի և ժողովրդի կապն ու փոխարարե-  
րությունը մեր պոեզիայում միանգամայն ճիշտ արտացոլում է  
գտնում: Իսկ դա շատ էական նշանակություն ունի մեր պոե-  
զիայի համար: Նախորդ դարաշրջանների գրականությունների  
համեմատությամբ, մեր պոեզիան նոր, սոցիալիզմի գեղարվես-  
տական գրականությունը բնորոշ ձևով է պատկերում մեծ ան-  
հատի, մեծ մարդու և ժողովրդի փոխարարությունը, կապը,  
թե՛ մեկի և թե՛ մյուսի դերը պատմության առաջնորդի մեջ,  
սեփականացիայի հաղթանակի մեջ: Մեր ժամանակի մեծ մարդը  
ճանաչել է ժողովրդի ծոցից, աճել ու բարձրացել է ժողովրդի, ա-

<sup>1</sup> Ա. շոտ Գրաշին — «Բնարական», 1939 թ., էջ 106:

ուջալոր դասակարգի՝ պրոլետարիատի ունեցողությունն պայքարում  
և այդ պայքարի փոթորիկներում էլ իր մեջ համակենտրոնաց-  
րել է ժողովրդի ուժն ու իմաստությունը՝ բեղմնավորված Մարքսի,  
Էնգելսի ու Լենինի հանձարեղ ուսմունքով, միշտ օրգանապես  
կապված ժողովրդի հետ ու միշտ հավատարիմ նրան: Այդ ուղիով  
անա, մեր ժամանակի մեծ մարդը, կազմակերպելով ժողովրդի  
հաղթանակը սոցիալիզմի համար մղված պայքարում, միասնա-  
ցել է ժողովրդի հետ, ապրելով ժողովրդի հոգու մեջ և ժողովուրդն  
էլ ապրում է այդ մեծ մարդու մեջ, որպես նրա մեծության և  
իմաստության աղբյուրն ու էությունը:

Այսպես են պատկերում մեր բանաստեղծները Ստալինի և  
ժողովրդի կապը:

Առաջնորդի և ժողովրդի օրգանական կապի ու միասնու-  
թյան մոտիվը մեր պոեզիայում՝ արտահայտվում է նաև որպես  
սոցիալիստական հայրենիքի պաշտպանություն, սովետական հայ-  
րենասիրության մոտիվ:

Ժողովուրդների մեծ Առաջնորդը սովետական հայրենասերի,  
սոցիալիստական հայրենիքի պաշտպանի բարձրագույն տիպարն  
է: Եվ մեր բանաստեղծները հայրենիքի պաշտպանությունը նվի-  
րած իրենց ոտանավորներում հիշում են Ստալինին, որովհետև  
նա անսպառ ուժի և անպարտելիության սիմվոլն է սովետական  
հայրենասերների համար:

Անա, օրինակ, շնորհալի երիտասարդ բանաստեղծ Սամվել  
Գրիգորյանի «Քայլերդ հաղթության» ոտանավորը նրա՝ «Հայրեն-  
իքի համար» գրքից.

«Ինչքան կուզի թող գազազի  
Մեր թշնամին նենգ ու դադիր.  
Ստալինյան արևի տակ  
Հզոր ենք մենք ու անխորապ»<sup>1</sup>:

Մի ուրիշ օրինակ. երիտասարդ բանաստեղծ Ղևոնդ Կոմու-  
նու մի ոտանավորը՝ «Քայլերդ սահմանապահների» վերնագրով,  
նրա՝ «Հայրենիք» ժողովածվից.

«Հայրենիքի Առաջնորդի պես հզոր,  
Արժիք աշքով հսկենք սահմանն հայրենի».

<sup>1</sup> Սամվել Գրիգորյան — «Հայրենիքի համար», 1939 թ., էջ 25:

Հայրենիքի դավաճաններ, ձեզ նզովք,  
Մենք անասան կանգնած ենք մեր սահմանին»:

«Թող միշտ հնչեն մեր երգերը սահմանին  
Ու երգի հետ Առաջնորդը մեր ժպտա.  
Վաչ թշնամուն, թե կփորձի այս ժամին  
Մեր սուրբ հողին իրա արնոտ, ձեռքը տա»<sup>1</sup>:

3. Շողենցն իր «Երգ Ստալինի մասին» ոտանավորում ա-  
սում է՝

«Մեր սահմաններում կանգնել ենք արթուն,  
Դարձած ուժգին կամք և խիզախություն,  
Մեծ առաջնորդը տալիս է մեզ հաղթ  
Ծով հերոսություն, խնդություն ու բաղդ:

Նա մեզ ժպտում է, որպես պայծառ հայր,  
Նա մեր ուժն է մեծ, հրճվանքը անհուն,  
Որպես պարտիզան, մեր կյանքի անծայր  
Պարտեզներն է նա սիրով խնամում»<sup>2</sup>:

Սովետական Հայրենիքի անվանի հերոսները մեծ Ստալինի  
աճեցրած քաջարի դավաճաններն են և նրանց դյուցազնական գոր-  
ծերն էլ Ստալինի ու հայրենիքի սիրով են կատարվում:

Նրանք Հյուսիսային բևեռը նվաճեցին մեծ Ստալինի հրա-  
շագործ սիրով ներշնչված: Այդ միտքն է դրված շքանշանակիր  
բանաստեղծ Հովհաննես Շիրազի «Բեկոի առումը» բանաստեղծու-  
թյան հիմքում:

«Իմ հայրենիքը—դյուցազուհուններ ունի անգին» — հպարտու-  
թյամբ ասում է բանաստեղծը, դյուցազուհուններ՝

«Երկնաստան ու անվեհեր,  
Որոնք ունեն արծվի թևեր»  
«Աչքերը լի արևներով,  
Հողիները՝ երազներով,  
Սիրտը՝ սիրով Առաջնորդի»:

Այդ հզոր սիրով էլ նրանք խիզախություն թռան ու անցան

«Հավերժական ջուրա հյուսիսով»:

<sup>1</sup> Ղ. Կոմունի — «Հայրենիք», 1939 թ., էջ 18:

<sup>2</sup> Յ. Շողենց — «Միզախություն», 1938 թ., էջ 7:

Նրանք՝ բոլոր ժամանակների մեծ օգաչուները նվաճեցին մինչ այդ անառիկ Հյուսիսային բեկուր, որովհետև նրանց հետ էր Ստալինը:

Այդ միտքն է արտահայտում նաև երիտասարդ բանաստեղծ Գևորգ Հայրյանի «Հերոսական թռիչք» ոտանավորը, գրված «Սովետական Միության հերոսներ Ջվալովին, Բայդուկովին, Բելյակովին, Մոսկվա—Հյուսիսային բեկու—Ամերիկա կատարած թռիչքի առթիվ»:

«Ո՛չ սառնամանիքն անեղ Հյուսիսի,  
Ո՛չ մոռնացող քամին խելագար,  
Ո՛չ գիշերը մութ, խաված, անյուսին,  
Ջրնկճեցին նրանց կամքը հողմավար:

Գիշերում խավար, ամպոտ, անավոր  
Շողաց լուսեղեն, ոսկե արեգակ,  
Անունն էր դա մեծ ուսուցչի ու հոր,  
Անունը՝ դարձած նրանց զբոսակ»:

Ահա այդ «արեգակի լույսով» ու այդ դրոշակով սովետական օգաչուներն աննախընթաց հաղթանակ տարան, բարձրացնելով սոցիալիստական հայրենիքի փառքը ողջ աշխարհում:

### VIII

Բանաստեղծները համեմատություններ են փնտրում, նրանք հղանում են հիանալի բանաստեղծական պատկերներ՝ Ստալինի մեծությունն արտահայտելու համար. բայց և ամեն քայլափոխում նրանք զգում են, որ թույլ են իրենց գտած համեմատություններն ու պատկերները, որ նրանք անկարող են հասնել նրա խորություն հատակը և նրա մեծություն, բարձրություն կատարները. բանաստեղծներին թվում է, թե իրենց ստեղծագործական ֆանտազիայի սուզանավը միշտ նրա խորություն մակերեսին է, իսկ թռիչքը՝ նրա երկնաքեր բարձրության ստորոտներում: Այդ միտքն է հուզել, ահա, բանաստեղծ Սուրեն Վահունուն, որի «Անունը» վերնագրով լիրիկական բանաստեղծությունը գրված է Ջամբուլյան մոտիվով: Ջամբուլն իր՝ «Իմ հայրենիքը» նշանավոր պոեմում ասում է, դիմելով Ստալինին, որ՝

«Ձեռն գտնի ժիրշները ոչ մի համեմատում,  
Հանդի մեր վարպետ երգիչները ակին

Ձուսնն այդ խոսքերը—քաղերն այդ անգին:  
...Ստալին, ծերունիս չունի համեմատում...»

Ապագա սերունդները, գուցե՝ ասում է նա,

«Կըզանեն անվանի  
«Մի նոր համեմատություն—Ստալինին արժանի»:

Ահա այդ ողով է տոգորված նաև հայ բանաստեղծը, որոնելով մի համեմատություն Ստալինի մեծ անվանն արժանի:

«Միտք եմ անում Ջամբուլի պես, — ինչի հետ քեզ համեմատեմ,  
Ի՞նչ են բոլոր ասողերն անմար կամ արևի հուրը քո դեմ»:  
«Ու ես անգոր միտք եմ անում, ինչի հետ քեզ համեմատեմ,  
Զկա ոչինչ քեզ հավասար, ես քեզ արժան խոսք չգիտեմ»:

Բանաստեղծը, սակայն, չգտնելով համեմատելի Առաջնորդին պատկերող արտահայտիչ համեմատություն, բանաստեղծական խոր հղացումով արտահայտում է այն, թե ինչ է նշանակում Առաջնորդի անունը — սովետական ժողովուրդների ու ողջ մարզկույթյան համար:

Բանաստեղծը, ոգեշնչված իր գեղեցիկ մտահղացումով, ասում է.

«Բայց ես գիտեմ մի հզոր բառ և երբ ես այդ բառը ասեմ,  
Պիտի տեսնեն բոլորն իսկույն ինչ որ ունենք լավ ու վսեմ,  
Պիտի տեսնեն այդ բառի մեջ և՛ արևներ, և՛ սեր, և՛ բախտ,  
Ժողովուրդներ վերածնված, նրանց սիրո դաշինքն անխառն,  
Պիտի տեսնեն ազատ մարդուն, նրա մտքի թռիչքն անհաս,  
Հաղթանակներ դյուցազնական, երջանկություն հազար դարբաս...  
Պիտի տեսնեն աշխարհը մեր—մարգու երազն ամենաթանգ,  
Եվ այն ուղին, որով հավերժ երջանկություն ու բախտ գտանք,  
Այդ բառի մեջ հազար լեզու և սերունդներ որ պիտի գան,  
Պիտի տեսնեն հայրենիքիս պայծառ ներկան ու ապագան,  
Ահա ես այդ բառը գիտեմ,—ամենից լավ, իմաստովին,  
Իսկ դա միայն անունն է քո և այդ անունն է—Ստալին»:

Ահա և շնորհալի բանաստեղծ Սարմենի աշուղական ձևով գրված (մուխամմազ) բանաստեղծությունը «Հավերժական հուր» վերնագրով:

Այդ վերնագիրն արդեն ասում է, թե բանաստեղծն ինչպիսի պատկեր է ընտրել: Ստալինը սովետական ժողովրդի կյանքի հավերժական անշնչ հուրն է, այն՝ ինչ անցյալում, երազելով անմահական սիրո ու երջանիկ կյանքի մասին, ժողովուրդն ստեղծել:

պատկերել է իր հեքիաթներում: Հեքիաթայինը իրական է դարձել, ժողովուրդն իր երազածը մարմնացած է տեսնում Ստալինի մեջ: Ժողովրդի «երջանկություն հուրն ես, Ստալին» — ասում է բանաստեղծը.

«Ձծերացող ջահելության, անմահական ուժ, Ստալին,  
Հազարավոր դարունների, ծաղիկների բույր, Ստալին,  
Ազատության անմար փարոս, ճշմարտության թուր, Ստալին»:

Համեմատությունների բաժնում ուշագրավ ու գեղեցիկ է բանաստեղծ Սողոմոն Տարոնցու «Արևի պես» վերնագրով ոտանավորը.

«Արևի պես սկիզբ տվող, հավերժ տեղող շող ես դու,  
Մայրերի մայր սիրնողող, կյանք պարգևող հող ես դու,  
Միլիոն սրտեր իրար կապող լուսավորիչող օդ ես դու,  
Կյանքի արմատը սաղարթող, դվարթ թրջող ցող ես դու»:

«Ամեն ինչին մահ կա կյանքում, միշտ հասնատ են կյանք ու մահ,  
Թե կա սկիզբ, կա և հանգում, դա օրենք է և հիմա,  
Միայն մեկին չկա անկում—ժողովուրդն է դա անմահ,  
Նրա մեջ հար հուրհուրատող, հար ճաճանչող շող ես դու»<sup>1</sup>:

## IX

Ընկեր Ստալինի ամեն մի ելույթը (ճառ, գեկուցում, զրույց), նրա իմաստուն դիտողություններից յուրաքանչյուրն ստեղծագործական նոր խանդավառություն ու մտահղացումներ է առաջացնում մեր բանաստեղծների մեջ: Մեծ Առաջնորդի պայծառ մտքի հզոր կայծերից բանաստեղծական երևակայության բոցն է բռնկվում նրանց սրտում: Իսկ չէ՞ որ Առաջնորդն իր ելույթներում հանձարեղ խորություն մեր հանրագիտությանը ու պայքարի նվաճումները, պայծառությունը լուսավորում է հետագա առաջընթացի ուղին:

Ահա մեկ-երկու օրինակ, թե ինչպես ընկեր Ստալինի ելույթները մեր բանաստեղծների համար հանդիսանում են իդեալական և ստեղծագործական ներշնչման անսպառ աղբյուր:

Բանաստեղծ Սարմենի «Հերոսների ուղին» բանաստեղծությունը (1937 թ., Հոկտեմբերի 20-ամյակի առթիվ), մեր պոե-

զիայում մի հիանալի արձագանք է մեծ Առաջնորդի այն նշանավոր պատմական ճառի, որ արտասանել է նա 1931 թվի փետրվարի 4-ին՝ սոցիալիստական արդյունաբերություն աշխատողների համամիութենական կոնֆերենցիայում:

Ինչպես հայտնի է, այդ ճառում՝ վերհիշելով Լենինի դեռ Հոկտեմբերի ժամանակ հայտնած այն հանձարեղ միտքը, թե՛ «կամ մահ, կամ հասնել ու անցնել կապիտալիստական առաջավոր երկրներին», ընկեր Ստալինը պարտիային, սովետական ժողովրդին տվեց հանուն սոցիալիզմի մղվող պայքարի այն մարտական լողունգը՝ «Առաջավոր երկրներին մենք հետ ենք մնացել 50—100 տարով: Այս տարածությունը մենք պետք է կտրենք-անցնենք 10 տարում: Կամ մենք այս բանը կանենք, կամ մեղ կձգմենք»<sup>1</sup>: Ընկեր Ստալինն այդ առնչությունը էլ տվեց տեխնիկային տիրապետելու մարտական լողունգը, ավարտելով իր պատմական ճառն այն հանձարեղ կանխատեսումով, ըստ որի, երբ բոլշևիկները կընձվաճեն տեխնիկայի ու գիտության ամբողջ էլ, ապա՝ ասաց ընկեր Ստալինը «մեղանում այնպիսի տեմպեր կսկսվեն, որոնց մասին մենք այժմ երազել էլ չենք համարձակվում»:

Առաջնորդն ասաց այդպես կլինի, այդպես էլ եղավ: Պատմական հանրահայտ փաստ է, որ սոցիալիզմի երկիրը վերջին 8—10 տարում տեխնիկայի զարգացման մակարդակի տեսակետից հասավ և անցավ առաջավոր կապիտալիստական երկրներից: Ահա այդ անցած փառապանծ ուղին է, որ բանաստեղծ Սարմենը պատկերում է որպես «հերոսների ուղի»: Սարմենի բանաստեղծությունը պատկերում է սովետական երկրի սոցիալիստական ինդուստրացումը մեծ Ստալինի գծած ուղիով:

«Մենք չենք ուզում խփված լինել» — ասաց հանձարն արեգակ—  
Ու երկիրը առաջ տարավ հողմի թափի պես արագ»:

Ստալինյան իմաստուն պլանով իրականացված ինդուստրացման մեծագույն հաղթանակները սոցիալիստական երկրի

«Կյանքը դրին արագության, թռիչքների թևերին»—

ասում է բանաստեղծը: Այդպիսով՝ հիմնովին վերափոխվեց մեր երկիրը, խորտակվեցին «անշարժություն, տգիտություն, բերդերը» և այդ արագաթափ վերափոխման ընթացքում սովետական երկրի

<sup>1</sup> Ս ո ղ ո մ ո ն Տ ա Ր ո ն ց ի—«Բանաստեղծություններ», 1939 թ., էջ 26:

<sup>1</sup> Ի. Ճ. Ս տ ա լ ի ն — «Լենինի մի հարցերը», 1937 թ., էջ 565:

«բազմացեղ ժողովուրդը» ծնեց ու աճեցրեց «հերոսների մի ամբողջ սերունդ»:

Երկրի տնտեսական կյանքի վերամիտման ընթացքում վերափոխվեց ինքը՝ ժողովուրդն իր հոգով ու կամքով: Սոցիալիստական հզոր ինդուստրիայի երկիրը դարձավ միաժամանակ հերոսների երկիր, անպարտելի հզոր երկիր, շնորհիվ մեր իմաստուն Առաջնորդի:

Ահա մի օրինակ էլ. հինհունական միջոլողիայից Անթեյի առասպելի հիշատակումը ընկեր Ստալինի հայտնի ելույթում (Համկ(բ)Պ ԿԿ-ի՝ 1937 թ. փետրվար-մարտյան պլենումում՝ «Պարտիական աշխատանքի թերությունների մասին» աված զեկուցումը) երիտասարդ բանաստեղծուհի Սիլվա Կապուտիկյանին ստեղծագործական ներշնչում է հաղորդել և նա գրել է «Անթեյ» վերնագրով զեղեցիկ բանաստեղծությունը<sup>1</sup>:

Անթեյի առասպելի օրինակով մեր պարտիայի ու ժողովրդի անխզելի կապի մասին մեծ Առաջնորդի հանճարեղ դիտողությունը բանաստեղծուհու մեջ ստեղծագործական հույզ ու պատկերներ է առաջացրել:

Կապուտիկյանն իր ոտանավորում («Անթեյ») նախ տալիս է հինհունական այդ առասպելը, թե ինչպես՝

«...Հերկուլեսը իմաստուն քաջ Անթեյին կտրեց հողից,  
ճաքավ նրան երկինքն ի վեր, ու չթողեց, որ նա նորից  
Շփվի հողին, մորն իր սիրող, նոր ուժ առնի ու նոր կրթով  
Նվ երկնքում ամպերի մեջ խեղդեց նրան իր ձեռքերով...»:

Այնուհետև, զեղեցիկ պատկերներով ու համեմատություններով տրված է պատմական «այն երեկոն», երբ պարտիայի մեծ Առաջնորդն իր հանճարեղ զեկուցումն էր տալիս, զեկուցում, ուր օգտագործված է Անթեյի առասպելը՝ պարտիայի ու ժողովրդի անխզելի կապի նշանակությունը բացատրելով:

«Անթեյ»-ում՝ մեծ Առաջնորդի այդ բացատրությունը գեղարվեստականորեն տրված է հետևյալ երկու քառյակներում, որոնք պատկերում են պարտիայի ու ժողովրդի անխզելի կապը-

«Մեզ ծնել է ժողովուրդը, նա է պահել մեզ աննկուն,  
Նա օգնել է, մեզ գուրգուրել, ինչպես Գեյտն իր գավակին».

<sup>1</sup> Երիտ. գրողների «Ալմանախ», 1938 թ., էջ 10:

Երբ թշնամին մեր դավադիր ուզել է մեզ գետին դարկի,  
Նրանից ենք մենք ուժ առել ու մնացել հավետ կանգուն:

Ու քանի մենք կապված լինենք ժողովրդին՝ մորը մեր մեծ,  
Որ սնել է ու կյանք տվել մեր շարքերին ամուր ու քաջ,  
Ձի խորտակի ուժը մեր հար ոչ մի ոտով ու Հերկուլես  
Ու կըմնանք մենք միշտ հաղթող, անպարտելի ու աննվաճ...»:

## X

Մեր բանաստեղծները մի շարք երգեր են նվիրել մեծ Առաջնորդի ծննդավայրին՝ Գորի քաղաքին, երբ այցելել են սովետական հայրենիքի այդ նվիրական վայրերից մեկը: Հիշենք շքանշանակիր բանաստեղծ Գուրգեն Բորյանի՝ «Երգ գրված Գորի քաղաքում» զեղեցիկ, սրտառու ընդհանրացողությունը, նաև բանաստեղծ Սուրեն Վահունու «Հրաժեշտ Գորիին», Վահան Արամունու «Գորի»-ն և այլն:

Բանաստեղծներին անհուն խանդավառություն և հպարտություն զգացմունք է համակում այն գիտակցությունը, որ աղքատ արհեստավորի անշուք տնակում ծնված մանուկը հետագայում դարձավ աշխատավոր ժողովուրդների ազատագրական պայքարի հանճարեղ առաջնորդը, սոցիալիստական հասարակարգի իմաստուն ճարտարապետը, ժողովուրդների ազատ ու երջանիկ կյանքի սիմվոլը:

«Այստեղ եմ ես... Գո քաղաքում, ով Առաջնորդ Արեածին,  
Երջանկություն հաղար պըրյուր սիրաս ու հոգիս ողողեցին,  
Ջահել հոգուս անմար հույզով, վառ կարոտով, սիրով անհագ,  
Գոչում եմ ես...— «Քեզ բյուր ողջուն, պայծառանուն Գորի քաղաք»:  
«Ահա եկա ես տեսություն ըստ տնակին հայրենական,  
Ինչպես երգեմ գրչով ջահել, սիրուս ծովը խորն է այնքան:  
Ո՛ր, վեհ վայրկյան, ես զգացի անհագ կարոտ և հիացում»—

Խանդավառությունը երգում է շքանշանակիր բանաստեղծ Բորյանը, որի առաջ, ինչպես գրում է նա, Գորի քաղաքի անշուք բայց նվիրական տնակը՝

«Առաջնորդի էպոպիի դուռն է բացում»:

Մեծ հուզումով է գրված նաև Վահունու «Հրաժեշտ Գորիին» — իրիկական բանաստեղծությունը երկոտնյա աշխույժ յամբով:

«Ինչպես էլ ես գնամ հեռուն» — ասում է բանաստեղծը, —  
բայց միշտ էլ անջնջելի «կմնաս իմ հուշերում» «նվիրական չքանադ  
Գորի»: Միշտ էլ, ասում է բանաստեղծը.

«Ես կտեսնեմ հեռու մի տուն,  
Իր պատերով խարխուլ ու հին,  
Այնտեղ մի օր փոքրիկ որդուն,  
Օրոր երգեց վրացուհին»:

«Այստեղ ժպտաց մանուկն ըմբոստ,  
Գոշկակալի աղքատ որդին,  
Որ բարձրացավ որոտընդոստ —  
Արև բերեց ժողովրդին»:

Նա՝

«Որ մեզ ժպտում է Կրեմլից,  
Որպես ընկեր և որպես հայր...  
Թանգ ես անչափ ու սիրելի —  
Առաջնորդի ծննդավայր»:

Այդպիսի ջերմությամբ, խորը էմոցիոնալ հագեցվածությամբ  
են գրված Առաջնորդի ծննդավայրին նվիրված մյուս բանաստեղծ-  
ություններն էլ:

## XI

Մեր պոեզիայի ստալինյան ցիկլում բարձրարժեք ու նշա-  
նակալից բանաստեղծական գործ է «Ժողովուրդների մեծ Առաջ-  
նորդ ընկեր Ստալինին» ուղղված այն ոգեշունչ նամակ-ող-  
ջույնը, որ ընդունվել է հայ ժողովրդի հերոսական էպոսի՝ «Սա-  
սունցի Դավթի» 1000-ամյա հոբելյանին նվիրված հանդիսավոր  
նիստում<sup>1</sup>: Այդ հիասքանչ ու սրտառուչ նամակ-ողջույնը, ինչ-  
պես հայտնի է, գրել են մեր կլասիկ պոեզիայի մեծ վարպետ  
Ավետիք Իսահակյանը, շքանշանակիր բանաստեղծներ Ն. Զարյանը,  
Գեղամ Սարյանը, Գուրգեն Բորյանը և երիտասարդ բանաստեղ-  
ծուհի Սիրվա Կապուտիկյանը:

Այդ հիանալի բանաստեղծությունը, որ գրված է մեր հայ-  
կական վիպերգության բազմադարյան արվեստով ու մեր ժողովրդի

սոցիալիստական այսօրվա երջանկություն կրակով, հայկական  
սովետական պոեզիայի մարգարիտներից մեկն է: Այդ «Նամակ-  
ողջույն»-ում հիանալի պատկերավորությամբ արված է այն, թե  
ինչպես՝ «Նամակ-ողջույն»-ի արտահայտիչ խոսքերով ասենք.

«Հայ ժողովուրդը, որ անցել է փոթորկոտ դարերով,  
Ազատաբաղձ իրեն հողթություն հույս ու կրթով,  
Նա, որ անեղ աղետների հազար ամպրոպ է տեսել,  
Նվ Լենինյան եղբայրության ծիածանին է հասել»  
«Որհնդդային հայրենիքի միասնությամբ անխորտակ,  
Վերածնված Հայաստանի մեր ոստանում...»

ցնծությամբ տոնից «իդ հանձարի հազարամյակը»:

Այս նամակ-բանաստեղծությունը հիանալի և ուշագրավ է ոչ  
միայն նրանով, որ այստեղ կլասիկ արվեստով պատկերված է մեր  
ժողովրդի բազմադարյան պատմության ուղին, նրա գոյություն  
հայտնի ժամանակներից մինչև մեր էպոսի 1000-ամյա հոբելյանը,  
այլև մանավանդ նրանով, որ այս բանաստեղծության մեջ կա մեծ  
Ստալինի դուրսագնական դեմքի պատկերման մի հիանալի նմուշ:  
«Նամակ-ողջույն»-ի հեղինակները դիմելով ընկեր Ստալինին,  
այսպես են պատկերում նրան, օգտագործելով մեր ժողովրդական  
էպոսի գեղարվեստական դինամիզմը.

«Եվ Դու այսօր, մեծ առաջնորդ, բռնել ես կուռ բո ձեռքին  
Աշխարհների ազատության վճիռը՝ թուր-կայծակին,  
Դու բռնել ես թուր-կայծակին իբրև անհաղթ դուրսագնուն,  
Նվ շողաղյուստ ես աշխարհում հորիզոնից հորիզոն»:

Պատկերը հիանալի է և ինքնատիպ:

Այս նամակ-բանաստեղծությունը, որ հայ ժողովրդի մոտ  
աշխարհագրամյա պատմությունն է՝ բանաստեղծական խոր և իմաս-  
տալից ընդհանրացումներով, անկասկած, կմտնի մեր սովետական  
պոեզիայի զանազանը, որպես հրաշալի վիպերգություններից մեկն  
այն բանի, որ սովետական հայրենիքի զարգացման ստալինյան  
էպոսայում սկզբնավորվել է արդեն հայկական սովետական պոե-  
զիայի կլասիկայի էտապը:

Մեր պոեզիայի ստալինյան ցիկլում ուշագրավ ստեղծագոր-  
ծություն է շքանշանակիր բանաստեղծ Գուրգեն Բորյանի «Արևի  
համբույրը» լերիկական պոեմը, որը սովետական երկրի աշխատա-  
վոր մարդու ստալինյան վերափոխման և կոլտնտեսական երջանիկ

<sup>1</sup> «Որհնդդային Հայաստան», № 216, 1939 թ., սեպտեմբ. 16:

կյանքի մի կենդանի պատկեր է ներկայացնում: Հիանալի բանաստեղծական մտահղացում է ունեցել երիտասարդ բանաստեղծը՝ լիրիկական պոեմի ձևով պատկերել, թե ինչպես «մի նախրապանի հասարակ որդի» «գարձավ անվանի ու քաջ օգաչու», սովետական հայրենիքի պաշտպանություն գործում նա աչքի ընկալի իր խելախուլթյամբ ու հերոսի կոչում ստացավ:

«Բանակ ճամբեցին հրամանով նրան,  
Ամուր նա կովեց մեր սահմաններում,  
Հաղթեց մարտերում հերոսի նման,  
Սահմանը խախտող անարգ թշնամուն»:

Անունը նրա փառքով պսակվեց,  
Պատիվ ավեցին մեր քաջ հերոսին,  
Եվ մի օր ինքը՝ Առաջնորդը մեծ  
Իմացավ նրա քաջության մասին»:

Այնուհետև «նախրապանի հասարակ որդին» երջանկություն է ունենում իր տասնմեկ քաջ օգաչու ընկերների հետ միասին, «Կրեմլ—Ստալինին ալցելություն» գնալու: Հերոս օգաչու դարձած այդ «շարքային կոլտնտեսականը» Կրեմլում արժանանում է մեր նոր կյանքի «Արևի համբույրին»—ժողովուրդների մեծ Առաջնորդի հայրական համբույրին:

## XII

Ուշագիտ հետեւելով մեր աշուղների ու ժողովրդական երգիչների (որ գերազանցապես կոլխոզական գյուղացիներ են) հյուսած պարզ, անպաճույճ, բայց անհուն ջերմությամբ ու անկեղծությամբ գրված ներբողներին-գովերգներին, կտեմենք, որ այդ ստեղծագործություններում հիանալի կերպով արված են մեր մեծ Առաջնորդի կերպարի ամենաբնորոշ գծերը:

Այդ ներբողներում-երգերում նշվում են մեծ Ստալինի հանձարեղությունը—իմաստությունը, նրա մտքի անսահման խորությունն ու պայծառությունը, նրա կամքի դյուցազնական ուժը, անընկճելիությունն ու անսասանելիությունը: Նրա անխղճ օրգանական կապը ժողովրդի հետ, նրա հումանիզմը—մարդկայնությունը՝ անսահման սերը դեպի ժողովուրդը և հայրական հոգատարությունը աշխատավոր մարդու նկատմամբ, իսկ այդ ամենի

հետ միասին՝ ժողովրդի փոխադարձ անհուն սերն ու նվիրվածությունը՝ Նրա՝ Ստալինի նկատմամբ:

Սովետական աշուղներն ու կոլխոզական երգիչները մեծ Առաջնորդին նվիրած իրենց երգերը հյուսում են ժողովրդի ամենանախիրական զգացումներից ու խոհերից, նրան գովերգում ու դրվատում են ամենաթանգ ու ամենամոտերմական որակումներով ու բառերով: Նրանց հորինած ներբողներում ավելորդ բառեր, անիմաստ պաճուճանքներ չկան. նրանք պարզ են ու երգվում են «ամբողջ հոգով» և ժողովրդի երջանկությամբ լի մեծ սիրտ են բաց անում Առաջնորդի առաջ, սիրտ, որ, իբրև անեղծ հայելի, ճշմարտացիությամբ անդրադարձնում է Առաջնորդի պատկերը:

Ասացինք, որ մեր ժողովրդական ստեղծագործությունը, մանավանդ նրա լենինյան-ստալինյան ցիկլը՝ հերոսական-էպիկական է՝ նուրբ ու ջերմ լիրիզմի հյուսվածքով:

Պատկերելով մեր ժամանակի և բոլոր ժամանակների մեծագույն հերոսներին, պատմության մեծագույն դյուցազններին, անմահ լենինին ու մեծ Ստալինին, ժողովրդական ստեղծագործությունը, պոեզիան չի ձգտում նատուրալիստական փաստագրություն, արտաքին պորտրետային ճշմարտանմանություն: Այդպիսի նայելով, էմպիրիկ «ռեալիզմը» խորթ է ժողովրդական երգիչներին, ինչպես և մեր բանաստեղծներին՝ ընդհանուր առմամբ: Առաջնորդների՝ մեր էպոխայի ժողովրդական մեծագույն հերոսների, լենինի և Ստալինի կերպարների պատկերման ժամանակ մեր ժողովրդական երգիչներն արտաքին նմանողական մոմենտներ չեն հետապնդում, այլ փնտրում են խոսքի գեղարվեստական արտահայտչական միջոցներ՝ պատկերելու այդ մեծ հերոսների իդեական-հասարակական բովանդակությունը և հոգեկան հարստությունը, նրանց ղեկավարած գործի ամբողջ վեհությունն ու համամարդկային պատմական իմաստը:

Եվ եթե մեր աշուղները, ժողովրդական երգիչները, ինչպես և բանաստեղծները՝ այդ մեծագույն հերոսների պատմական գործի բնութագրման ժամանակ դիմում են հիպերբոլիզմի պրիոմներին, որոնք հատուկ են ամեն մի հերոսական էպոսի, ապա դա բնավ նրանց չի շեղում ռեալիզմից: Ինչպես հայտնի է, առանձնապես հիպերբոլիզմը, հերոսների կյանքի ու գործերի բնութագրման պատկերման ժամանակ հեքիաթային-առասպելական պրիոմներին

դիմելը՝ հատուկ է հին ժողովրդական վիպերգություններին, դյուցազնավեպերին: Բայց ինչ համեմատություն կարող է լինել բոլոր այդ հին ժողովրդական դյուցազնավեպերի հերոսների և մեր էպոսայի իրական պատմական մեծ հերոսների միջև:

Ճիշտ է նկատել շքանշանակիր բանաստեղծ Նայիրի Զարյանը, որ հին վիպերգությունների ժամանակների համեմատությամբ՝

«Հիմա ուրիշ են մեր դարի  
Չափանիշներն հերոսության»:

«Այլ են հիմա հերոսության  
Ձևն ու իմաստը խորախոր»:

Հին դյուցազնավեպերի հիպերբոլիկ արտահայտչական միջոցներն անգամ շատ թույլ են մեր էպոսայի դյուցազնավեպը հյուսելու համար:

«Ինչպես գրեել մեր օրերի  
«Իրական» ու «Շահնամեն»—

իրավացի կերպով հարցնում է բանաստեղծը: Չէ՞ որ թույլ ու քիչ արտահայտիչ են՝ Հոմերոսի «Իլիական»-ի, Ֆիրդուսու «Շահնամեն»-ի կամ մեր ժողովրդի 1000-ամյա մեծ դյուցազնավեպի կերպարների պատկերման միջոցները, տալու կերպարը մեր ժամանակի այն մեծ հերոս-դյուցազնի,

«Ով կտրատում է պատմության  
Կուռ շղթաները դարավոր,  
Քանդում զբոլոքը հավիտյան,  
Կերտում նոր կյանք, նոր առավոտ»:

(Ն. Զարյան—«Փիրզուհի»):

Ահա թե ինչու մեր պոեզիայում ու ժողովրդական ստեղծագործությունում մեջ Ստալինի մեծություն, հզորություն, նրա հանձարի ուժի պատկերման ամենագլխավոր միջոցը՝ արևի հետ կատարվող համեմատությունն է, չէ՞ որ արևը մեր երկրագնդի ողջ օրգանական աշխարհի (այդ թվում և մարդու) գոյություն կենսատու ընդհանուր սկզբնաղբյուրն է, արևի էներգիան է կյանք ու շունչ տալիս մեր մոլորակին: Եվ ահա մեծ Ստալինն էլ մեր ժողովրդի զեղարվեստական պատկերման մեջ ներկայանում է, որպես արև՝ սովետական երկրի և ողջ աշխատավոր մարդկության կյանքի համար:

«Ծագեցիր աշխարհին քանց մի նոր արև,  
Պավար կյանքի լուսարեերը դու ես, դու,  
Ճնշված մարդկությունը նոր կյանք, նոր պարզե՛»<sup>1</sup>—

երգում է աշուղ Պաղային:

«Դու արև մեզ տաքացնող, մեր երկրում, մեզի համար,  
Բույս ու բարիք գոյացնող, մեր երկրում, մեզի համար»<sup>2</sup>—

աշուղ Պաղայուն ձայնակցում է աշուղ Հաջյանը:

Աշուղ Աշխույժը Ստալինին դրվատում է,

«Որպես հարստե արեգակ, անվերջ, հավիտյան,  
Դու լույսերի ակ ու աղբյուր, մաքր արև խավարի դեմ»—

ասում է նա:

Այդ համեմատությունը կա զրեթե բոլորի մոտ. «անշաման-դադ, անշիջ դամբար», «խավարը հալածող արև կենսաբար», «ամենապայծառ ջահ, մշտավառ արև» (Աշուղ Հրկեզ—«Մեծահանձար Ստալին»):

«Հանձար ես դու արեգակն,  
Արևի պես անմահական:  
Մեր աշխարհին կյանք ես տալիս,  
Հուսավորում մեր ապագան»  
(Աշուղ Շերամ—«Յերգ առաջնորդին»):

Բայց չէ՞ որ մեր մոլորակի վրա արևը միշտ եղել է, իսկ ժողովուրդը նույն այդ արևի տակ անթիվ դարեր տառապել է ու տանջվել. ահա թե ինչու, ժողովրդական երգիչները, Ստալինին բնական արևի հետ համեմատելով՝ հաճախ շոյում են Ստալինի գերազանցությունը աշխատավոր ժողովրդի կյանքի համար: Միայն «Ստալինի արևի տակ», ինչպես երգում է աշուղ Շափաղաթը՝ ժողովուրդը կարող է ազատ, երջանիկ լինել:

«Մի պարծենա դու երկնքում,  
Կամար կապող արեգակ,  
Քեզնից լավ է լուսավորում  
Ստալինը շարունակ:  
Ստալինի արևի տակ  
Մենք ապրում ենք երջանիկ»:

<sup>1</sup> «Ստալինը հայ ժողովրդի ստեղծագործության մեջ», 1939 թ., էջ 130:

<sup>2</sup> Նույն տեղ, էջ 111:

Այդպես՝ արեւին է նմանեցնում Ստալինին նաև Լենինականի շրջանի Ղալթաղչի գյուղացի, կոլխոզական երգիչ (47 տ.) Վարդան Խաչատրյանը։

«Ինչպես ջինջ երկնքից պայծառ արեւ՝  
Տաքացնում ու հույս ես տալիս, Ստալին,  
Բանվորին, գյուղացուն, աշխատավորին  
Ազատութեան լույս ես տալիս, Ստալին,  
Նըջանկություն, կյանք ես տալիս, Ստալին»<sup>1</sup>։

Ստալինի կերպարի մեջ աշուղները, ժողովրդական երգ ասացները նշում են Ստալինին որպես Մարքսի, Էնգելսի և Լենինի ուսմունքի ու գործի հավատարիմ, անշեղ շարունակողի և զարգացնողի՝ նոր հասարակարգի կառուցման պայքարում և աշխատանքում։

«Մարքսի-Լենինի մեծ ուսմունքը դու զարգացրիր, Ստալին» — ասում է աշուղ Պարկեշտը։

Հանդիսանալով Մարքսի-Էնգելսի-Լենինի ուսմունքի շարունակողն ու կենսագործողը, Ստալինը ժողովրդի Առաջնորդը, բոլրակից պարտիայի ղեկավարն ու առաջնորդն է։

«Ուսումդ առել ես Մարքսից-Լենինից,  
Ճշմարտությամբ տանում ես բոլշևիկյան գիծ,  
Լենինի մոտ շատ ես սիրվել ամենից,  
Կոմկուսի Ղեկավար, ընկեր Ստալին» —

երգում է վերնում հիշված 47-ամյա կոլխոզական երգիչ Վ. Խաչատրյանը։ Ժողովրդական երգիչները Ստալինի, որպես բոլշևիկյան պարտիայի առաջնորդի կերպարի մեջ առանձնապես նշում են նրա կամքի անթեքելիությունը, պողպատականությունը։

«Նրա կյանքի պատմությունն անընդհատ մի շարք է հաղթանակների՝ հրեշավոր դժվարությունների անընդհատ շարքի վրա... Դա-երկաթե մարդ է։

Ազգանունը տալիս է մեզ նրա պատկերը՝ Ստալին — պողպատ։ Նա անթեքելի է և ձկուն, ինչպես պողպատը»<sup>2</sup> — գրել է Հանրի Բարբյուս իր նշանավոր «Ստալին» գրքում։

Ահա ճիշտ այդպես է պատկերանում Ստալինը — պարտիայի ու

երկրի մեծ պայքարների ու մեծ կառուցումների ղեկավարը-Առաջնորդը՝ նաև մեր ժողովրդական ստեղծագործութեան մեջ։

«Կուսակցության մեծ Առաջնորդ,  
Պողպատից ամուր, Ստալին» —

գրում է աշուղ Խաչատրյան։

Ստալինը «պողպատի նման» է պատկերված շքանշանակիր աշուղ՝ Հայկական Գերագույն Սովետի ղեկավարած Գրիգորի Ժողովրդականացած «Ջան Ստալին» հայտնի երգում։

Այդ երգի ամեն տան վերջին կրկնվում են հետևյալ տողերը։

«Ջան Ստալին, ջան Ստալին,  
Պողպատի նման, Ստալին»<sup>1</sup>։

Ահա նույն աշուղ Գրիգորի և մի այլ երգը՝ «Իսկական պողպատ ես, պողպատ» վերնագրով

«Լենինի հետ դու միասին  
Իսկական պողպատ ես, պողպատ,  
Մեր աշխարհի լույսը բացվե,  
Իսկական պողպատ ես, պողպատ։

Սովորեցիր մեծ Լենինից —  
Դարձուր նրան կուռ զինակից,  
Զվախեցար բանտ-աքսորից —  
Իսկական պողպատ ես, պողպատ»<sup>2</sup>։

Իր այդ պողպատյա կամքով ու հզորությամբ Ստալինը պատկերանում է իր համաշխարհային-համամարդկային պատմական դերով, որպես մեր երկրի սոցիալիստական վերափոխումն իրականացնողը, որպես նոր հասարակարգի կառուցման ճարտարապետ։ Աշխատավոր ժողովրդի ազատագրական պայքարի Առաջնորդը, միաժամանակ առաջնորդն ու կազմակերպիչն է նոր կյանքի կառուցման։ Նա նոր կյանքի շինարար ու կառուցող է, ինչպես ազատագրված ժողովուրդը, որ Ստալինի կերպարի մեջ իր պատկերն է տեսնում՝ իր կամքի, ուժի, հզորության ու անպարտելիության մարմնացումը։

<sup>1</sup> «Ստալինը հայ ժողովրդի ստեղծագործության մեջ», 1939 թ., էջ 154։

<sup>2</sup> Андри Барбюс — Сталин, 1936 г., стр. 108—109.

<sup>1</sup> «Ստալինը հայ ժողովրդի ստեղծագործության մեջ», 1939 թ., էջ 85։

<sup>2</sup> «Դրական թերթ» № 33, 1938 թ., հուլիսի 20։

«Աշխարհաշեն, հաստատակամ, Ստալին, Գո պողպատի կամքի համար չափ չկան»<sup>1</sup>։

խրոխտ երգում է «Ճերուկ վորմնադիր» երգիչ Մնացական Թամրազյանը։

Ստալինն է կոլխոզային կյանքի հիմնադիրը և կառուցող վարպետը։

«Սոցիալիզմի ուղիղ ճամբան դո՛ւ բերիք,  
Բացիր մեր աչքերը, բարի լուս տեսանք,  
Հինը կործանեցիր, ներկան դո՛ւ բերիր»<sup>2</sup>—

երգում է աշուղ Բայանը։

«Պատվով կատարեցիր պատգամը Մեծի,  
Տվեցիր բո՛ւ երկրին շատ երկաթե Ֆի,  
Որքան խոսքան հող կար դրվեցին գործի,  
Կոլեկտիվ—նոր կյանքի վարպետ, Ստալին»<sup>3</sup>—

երգում է կոլխոզական երգիչ Վարդանը։

«Կոլխոզի հիմնադիրն ա  
Մեր ընկեր Ստալինը»—

ձայնակցում է կոլխոզնիկ Վարդանին՝ կոլխոզուհի Նուրին։

«Էն քաջ Ստալինը մեր մեծ,  
Կոլխոզներն հիմքը դրեց,  
Սովից, կովից մեզի փրկեց.  
Էլ հողս ու դամ չունենք հիմա»<sup>4</sup>—

երգում է կոլխոզնիկ Սաչատուրը։

Մեր աշուղներն ու ժողովրդական երգիչները մեծ Ստալինի կերպարի մեջ տեսնում են սովետական բազմազգ, բազմացեղ ու բազմալեզու ժողովուրդների եղբայրության, ինտերնացիոնալ միասնության սխմվուրը։

Մեր ժողովրդական ստեղծագործության մեջ՝ բոլոր աշուղներին ու երգիչներին ոգեշնչող թեմաներից մեկն է — ազգերի խաղաղ համակեցությունը, նրանց սոցիալիստական անքակտելի դաշինքը՝ մի մեծ համերաշխ ընտանիքում, Միութենական 11<sup>5</sup> կղ-

բայրների Միությունում։ Մեր պարտիայի լենինյան-ստալինյան ազգային քաղաքականության անշեղ կենսագործումը, նրա համաշխարհային-պատմական հաղթանակներն ստեղծագործական ներշնչման, ոգևորության առատ աղբյուր են աշուղների ու ժողովրդական երգիչների համար։ Նրանք հիանալի ու շատ խորը գիտակցում են, թե որքան մեծ նշանակություն ունի ազգությունների համերաշխությունը ժողովուրդների ազատ ու երջանիկ կյանքի համար, սոցիալիզմի գործի անպարտելիության համար։

«Սոցիալիզմի հանրապետության երկրորդ հիմքը մեր երկրի ազգությունների աշխատավորների դաշինքն է», «մեր երկրը... մարմնավորում է ազատ ազգությունների դաշինքը» — ասել է Ստալինը 1924 թվին՝ Սովետների V համագումարում։ Նրանից 14 տարի հետո՝ հանրագումարի բերելով «լենինյան ազգային քաղաքականության անկասկածելի հաղթության» արդյունքները՝ Ստալինն իր հանձարեղ զեկուցման մեջ՝ «ԽՍՀՄ նոր Սահմանադրության նախագծի մասին» — ասաց, որ այդ ժամանակամիջյունում «...արմատապես փոխվեց ԽՍՀՄ ժողովուրդների կերպարանքը, անհայտացավ նրանց միջից փոխադարձ անվստահության զգացմունքը, զարգացավ նրանց մեջ փոխադարձ բարեկամության զգացմունքը և այդպիսով կարգավորվեց ժողովուրդների իսկական եղբայրական համագործակցությունը միասնական միութենական պետության սխտեմում»<sup>1</sup>։

Իսկ չէ՞ որ պատմական այդ մեծագույն հաղթությունն էլ կազմակերպել ու իրականացրել է նա ինքը, մեծ Ստալինը։ Ահա թե ինչու ժողովուրդը երգում ու փառաբանում է մեծ Ստալինին՝ նրա անվան հետ կապելով սովետական հայրենիքի ազգերի համերաշխությունն ու եղբայրական համագործակցությունը, որպես լենինի պատգամների անշեղ կենսագործումը։

«Սկսած Սիբիրից մինչ Կովկասը մեր,  
Բազմատեսակ ժողովուրդներ ու ազգեր,  
Քեզանով դարձել են իրար եղբայրներ,  
Ամեն ազգի լեզուներից — բարե՛ք քեզ»<sup>2</sup>—

երգում է աշուղ Աշխույժը՝ գիմելով Ստալինին։

1 Ի. Վ. Ստալին — «ԽՍՀՄ Սահմանադրության նախագծի մասին», Յերևան, 1937 թ., էջ 30—31։

2 «Ստալինը հայ ժողովրդի ստեղծագործության մեջ», 1939 թ., էջ 107։

1 «Ստալինը հայ ժողովրդի ստեղծագործության մեջ», 1938 թ., էջ 160։

2 Նույն տեղ, էջ 142։

3 Նույն տեղ, էջ 154։

4 Նույն տեղ, էջ 189։

5 Այժմ 16։

«Դու Լենինի աշակերտն ես իմաստուն,  
Յազմեղիւ բազմազգի ԽՍՀ Միութեան»—

«Դու մի ծառ ես, պտուղներդ քաղցրահամ,  
Ողջ ազգերին դարձրիւ իրար բարեկամ...»<sup>1</sup>

ասում է աշուղ Եսայան իր՝ «Նոր աշխարհի հայր» երգում, որը՝  
„Творчество народов СССР“ մեծ ժողովածվի մեջ մտած՝ հայ-  
կական սովետական ֆոլկլորի լավագույն ստեղծագործութեաննե-  
րից մեկն է:

Տաջիկական մի հանճարեղ լեգենդում սովետական երկիրը  
համեմատված է կախարդական հրաշագեղ երկնագույն գորգի հետ,  
որի մեջ մարմնացած են Լենինի և Ստալինի գաղափարները: Սո-  
ցիալիզմի երկրի պատկերի մեջ տեսնել Ստալինի հիասքանչ կեր-  
պարը, — այս մոտիվը կա նաև մեր ժողովրդական ստեղծագոր-  
ծութեան մեջ: Այդ շատ հիանալի կերպով պատկերված է կոլխո-  
զական երգասաց Զաքո Մքոյանի հետևյալ հուզիչ երգում.

«Քո սուրբ անունըդ լսել եմ,  
Քո սուրբ երեսըդ չեմ տես,  
Համա որ կիշկամ Սովետու արև,  
Էտ քու էրեսդ ի, հնգեր Ստալին.  
Համա որ կիշկամ կոլխոզի հառտեր,  
Էտ քու պատկերքդ ի, քաղցր Ստալին.  
Համա որ կիշկամ գյուղացու էրես,  
Էտ քու էրեսդ ի, հնգեր Ստալին.  
Կիշկամ էն ուրախ մեր մանկուքսին,  
Քաղցր աչքերդ ի, աղիդ Ստալին»<sup>2</sup>:

Մեր ժողովրդական ստեղծագործութեան ստալինյան ցիկ-  
լում կան հիասքանչ լիրիկական նմուշներ, որոնց տողերում ու  
քառյակներում ուրախ կարկաչում են հայ ժողովրդի երջանկու-  
թյան աղբյուրները:

Այդպիսի նմուշներ կան շքանշանակիր աշուղ Գրիգորի,  
աշուղներ Աշխույժի, Շերամի, Հրկեղի, Եսայանի, Առաքելի ու  
մյուսների, ինչպես և բազմաթիվ կոլխոզնիկ երգիչների երգերում:  
Դրանցից հիշենք մեկ-երկու նմուշ:

Ահա, օրինակ, կոլխոզնիկ երգիչ Առաքելի «Բարև էրեք»

<sup>1</sup> «Ստալինը հայ ժողովրդի ստեղծագործութեան մեջ», էջ 123:

<sup>2</sup> Նույն տեղ, էջ 163:

երգը, որ հյուսված է ջերմ զգացմունքով: Մի երգ, որի մեջ ժո-  
ղովրդի և՛ տխուր անցյալը, և՛ նրա երջանիկ այսօրն է արտա-  
ցված:

«Մոսկովի յան թռնող անուշ կուռնիներ,  
Քաղցր Ստալինին շատ բարև էրեք,  
Ղամ—դուսից՝ ազատված Կովկաս զխաբից  
Հրնկեր Ստալինին—շատ բարև էրեք:

Էն, որ մե ազատեց Նիկոլի տուրքից,  
Դաշնակ—մուսաֆաթի կոտորող զորքից.  
Ախպերացած քրդից, հայից ու թուրքից  
Ումուդ Ստալինին—շատ բարև էրեք:

Որ մեզի ազատեց ցարերի դաթից,<sup>3</sup>  
Սովի, կովի, ցավի սև դիմաթից.  
Ազատ, ուրախ, կուշտ ապրող առյաթից  
Մեր հեր Ստալինին — շատ բարև էրեք:

Բարև էրեք զմեն միլլաթից, էլից,  
Ընդուր, որ մե փրկեց գաղանից, կելից,  
Քյափառեցի կոլխոզնիկ Առաքելից —  
Զոմառը Ստալինին—շատ բարև էրեք»<sup>3</sup>:

Ահա մի ուրիշ նմուշ էս, մի հուզիչ, սրտառու է երգ՝ «Խալի»  
վերնագրով, որ ասել է կոլխոզնիկուհի Վարսիկ Աբելյանը:

Գորգագործ կոլխոզնիկուհին սիրելի Առաջնորդի նկարով  
խալի է դործում և նրա գեղեցիկ նախշերն ու հյուսվածքը ցո-  
ղում իր սրտի նվիրական ապրումներով, խալին զարդարում իր  
երջանեկության ծաղիկներով, որպես թանգագին նվեր Ստալինին.

«Մատ ք եղունի մաշել եմ,  
Խալի դործել—նախշել եմ,  
Ստալինի նկարը  
Նրա վրա քաշել եմ:

Է՛յ, ջան, ընկեր Ստալին,  
Քեզնով հասանք լավ հալին —  
Նախշած, դործած, նկարած,  
Քեզի փեշքեշ իմ խալին:

<sup>1</sup> Հոգս ու ցավից:

<sup>2</sup> Ցեղից:

<sup>3</sup> «Ստալինը հայ ժողովրդի ստեղծագործութեան մեջ», էջ 118:

Խալու խեղ ել իմ ջանը  
Ընի նրա դուրբանը,  
Թող շատ ապրի Ստալինը,  
Կեցցե՛ իրա Դովրանը<sup>1</sup>։

Մեր ժողովրդական ստեղծագործության մեջ այդ բնույթի երգեր են նաև «Ստալին ու արև», «Բացվավ արև», «Ջան Ստալին», «Դալար մնաս դու մեզ համար», «Կոլտոզը ալին ա», «Ստալինի կոլտոզը», «Կոլտոզի սեւերը», և շատ ուրիշները, որոնց մեծ մասը եղանակված են իրենց՝ հորինողների կողմից և երգվում են որպես նոր կյանքի երգեր։

### XIII

Նշանակալից և ուշագրավ փաստ է այն, որ մեր բանաստեղծները ժամանակակից ֆոլկլորային նյութերի գեղարվեստական մշակումներն սկսել են ֆոլկլորի լենինյան-ստալինյան ցիկլի նյութերից։ Հայտնի է արդեն, որ 20-րդ դարի մեր կլասիկ մեծ բանաստեղծ Ավետիք Իսահակյանն աշխատում է Լենինի դյուցազնական կերպարի գեղարվեստական կերտման ուղ-ությամբ՝ օգտագործելով սովետական ժողովուրդների ֆոլկլորային հարուստ նյութերը, այդ թվում և հայկականը։ Հայտնի է նաև, որ բանաստեղծ Սարմենը, որոշ մշակումով բարբառայինից գրականի է փոխադրել «Լենին փաշա» ժողովրդական դյուցազ-նեղությունը, իսկ շքանշանակիր բանաստեղծ Հ. Շիրազը և բա-նաստեղծ Մ. Խերանյանը տվել են «Լենին փաշա»-ի գեղարվես-տական մշակման առաջին փորձերը։

Գեղարվեստական մշակման նախնական փորձերը կան նաև հայկական ու մյուս ժողովուրդների սովետական ֆոլկլորի՝ մեծ Ստալինին վերաբերող նյութերից։ Հիշենք բանաստեղծուհի Հռ. Պողոսյանի կատարած մշակումները տաշիկական հիանալի լե-գենդներից՝ «Երկնագույն գորգը» և «Երջանկության գիրքը», վերջինս («Երջանկության գիրքը») մշակել է նաև բանաստեղծ Սողոմոն Տարոնցին։ Այդ մշակումներին կանգնադառնանք քիչ հետո։

<sup>1</sup> Նույն տեղ, էջ 164։

Բացի դրանից՝ կան ընկեր Ստալինին վերաբերող ֆոլկլո-րային նյութերի մշակման այլ փորձեր ևս, որոնք վկայում են թե՛ այդ նյութերի գեղարվեստական արժեքի մասին և թե՛ մա-նավանդ, այն մասին, որ ինչպես մեր կլասիկ գրականության համար՝ անցյալի ֆոլկլորը, նույնը և ժամանակակից ֆոլկլորը դառնում է սովետական գրականության, սովետական պոեզիայի զարգացման ակունքներից մեկը, որից մեր բանաստեղծները խմում են ստեղծագործական կենսունակության ու անմահության կաթը։

Ֆոլկլորի օգտագործումով մեր բանաստեղծները տալիս են գրավիչ ստեղծագործություններ մեծ Ստալինի մասին։ Ահա, օրի-նակ՝ մեր, դեռ շատ երիտասարդ, բայց անպայման շնորհալի բա-նաստեղծ Գրիգոր Արտունու «Սոսո» լիրիկական սրտառուչ ոտա-նավորը<sup>1</sup>՝ գրված վրացական ֆոլկլորի օգտագործումով, ասենք նաև, վրացական սովետական անվանի բանաստեղծ Գ. Լեոնիձեի՝ «Ստալին» պոեմի մի հատվածի («Ծնունդ») ազդեցությամբ, ազ-դեցությույն, սակայն, որ երբեք չի ծածկում երիտասարդ բա-նաստեղծի ինքնուրույնությունը։

«Կախեթի առասպելներից մեկն ասում է, որ երբ հերոս է ծն-վում, նրա տան բախում արծիվ է իջնում և օդում բազեն երգում»—

ծանոթացնում է երիտասարդ բանաստեղծը։ Ահա այդ առաս-պելի օգտագործումով նա հյուսել է «Սոսո» վերնագրով իր հրաշալի բանաստեղծությունը՝ շատ իմաստալից պատկերելով ընկեր Ստա-լինի ծնունդն այսպես.

«Այդ օր բախում արծիվն իջավ,  
Թռավ կայտառ ծառերից—ծառ.  
Բազեն օդում թեփառարած՝  
Սավառնում էր, երգում պալծառ։

Արծիվը սեզ երգը լսեց,  
Ինքն էլ ուժգին երգեց հստակ  
Ու պտուկեց եռանդով մեծ,  
Բակը առավ իր թևի տակ...

Հանկարծ խրոխտ ձայնը թնդաց՝  
— Տղա ծնվեց մեր այս թաղում։

<sup>1</sup> «Գրական թերթ», 1938 թ. ապրիլի 6, № 16։

Տնակը հին երգով խնդաց, —  
Հայրն է ցնծում, ուրախանում:  
Հա՛, բերում են տանձ ու խնձոր,  
Կանաչք — մորը պատիվ անում:  
Մայրը մանկան գրկել է խոր,  
Ժպտում է, բայց ձայն չի հանում:

Մանկան կրծքին շաքար դրին,  
— Անուշ լինի շաքարի պես:  
Օրորոցում պողպատ դրին,  
— Ամուր լինի պողպատի պես:

Օրորոցը լույս տեղ դրին,  
— Անմար լինի արևի պես:  
Նվ անունն էլ Սոսո դրին,  
— Բարձր լինի սոսիի պես:

Երիտասարդ բանաստեղծի այս փոքրիկ սրտառուչ ոտանա-  
վորը, անկասկած, մեր մեծ Առաջնորդի անվանը նվիրված լավա-  
գույն ստեղծագործություններից մեկն է: Ժողովրդի ստեղծագոր-  
ծական ֆանտազիան և բանաստեղծի սրտալի, ջերմ ապրումը  
միացել են և տվել այդ գեղեցիկ կտորը:

Մեր ֆոլկլորի ստալինյան ցիկլից մշակման փորձ է արել  
նաև երիտասարդ բանաստեղծ Մկրտիչ Կորյունը: Նրա «Գովք  
մեծ Ստալինին»<sup>1</sup> վերնագրով բանաստեղծությունը, ինչպես ինքն  
է նշել, վերցված է հայկական սովետական ֆոլկլորից, մշակված  
աշուղական ձևով: Գեղեցիկ է այս ոտանավորն իր աշխույժ, թեթև  
յամբով, աշուղական հանդավորումով: Առավել արժեքավոր է այն  
իւր իղեական բովանդակությամբ: Այս «Գովք»-ը մեծ Առաջնորդի  
հզոր կամքի ու գաղափարների աշխարհավերայությունն ուժի գովքն  
է, գրված ժողովրդի լեզվով ու ոճով:

«Արև ծագեց մեր աշխարհին,  
Մարդուն, հողին, հանդին, քարին,  
Տեսանք կյանքի ու լույսի ու բարին,  
Մեզ արև տվողիդ մատաղ:

Կյանքը բուրաստան էս արևի,  
Ծաղկած մրգատան էս արևի,  
Երգի ճոխ գաստան էս արևի,  
Արևիդ ու շողիդ մատաղ:

<sup>1</sup> «Գրական թերթ», № 36, 1937 թ., հոկտեմբ. 24:

Ծովը ծովի հետ միացավ,  
Անապատը պարտեզ դարձավ,  
Կյանքը ուրախ, անվիշտ անցավ,  
Ուրախ կյանք բերողիդ մատաղ:

#### XIV

Ստալինի կերպարը մեր պոեզիայում ու ժողովրդական ստեղ-  
ծագործություն մեջ ավելի ու ավելի ծավալվեց, ավելի պայծա-  
ռացավ առանձնապես Ստալինյան Կոնստիտուցիայի հռչակումով:

Մեր պոեզիայի ու ֆոլկլորի ստալինյան ցիկլում ստեղծա-  
գործությունների մի նշանակալից մասը գրված է Ստալինյան  
Կոնստիտուցիայի կապակցությամբ:

Սովետական բոլոր մյուս ժողովուրդների հետ միասին հայ  
ժողովուրդն էլ Ստալինյան Կոնստիտուցիայի մեջ տեսավ իր դա-  
րավոր երազանքների բարձրագույն մարմնացումը: Արտահայտե-  
լով ազատագրված ու երջանիկ հայ ժողովրդի դպցումները, սո-  
վետական հայ գրողներն ու բանաստեղծները սրտալի ու ցնծա-  
գին ողջունեցին՝ մեր մեծ հայրենիքի այդ նոր, Ստալինյան  
Հիմնական Օրենքը:

Ստալինյան Կոնստիտուցիայի հռչակման ու պորձադրման  
տարիները մեր ողջ արվեստի, այդ թվում և մեր պոեզիայի ու  
ֆոլկլորի ծաղկման նոր, սլացիկ, դեպի վեր գնացող էտապ է,  
ստեղծագործական բարձր թռիչքների մի շրջան:

Մարդկության ազատագրման Ստալինյան ոսկե գրքից ներ-  
շնչված, մեր բանաստեղծները, աշուղներն ու ժողովրդական եր-  
գիչները հարստացրին մեր պոեզիան ու ֆոլկլորը բազմաթիվ նոր  
մեծարժեք գործերով: Կրկնակի շքանշանակիր բանաստեղծ Ն. Զար-  
յանի վերևում նշված «Դյուցազնագիրք» պոեմը և ապա «Վե-  
րածնունդ» վերնագրով ծավալուն բանաստեղծությունը (1937 թ.),  
այնուհետև հիշենք շքանշանակիր բանաստեղծ Հովհ. Շիրազի  
«Մեր երջանկությունը՝ նամակ-երգ ընկեր Ստալինին» (1938 թ.)  
և «Արևի երկիր» պոեմները, նրա «Որենք», «Ժողովրդի ձայնը Մեծ  
Ստալինին» և այլ բանաստեղծությունները, Հայաստանի երիտ-  
գրողների հայտնի նամակ-բանաստեղծությունը՝ ուղղված ընկեր

Ստալինին, Մ. Խերանյանի «Հանճարեղ պոեմ» վերնագրով լիբի-  
կական պոեմը, շնորհալի բանաստեղծուհի Հո. Պողոսյանի «Երկ-  
նագույն գորգը» և «Երջանկության գիրքը» տալիկական լեզենդ-  
ների հիանալի մշակումները, այնուհետև շքանշանակիր բանաս-  
տեղծներ Գ. Սարյանի, Գ. Բորյանի, մյուսներից՝ Սուրեն Վա-  
հունու, Սարմենի, Ս. Տարոնցու, Աշ. Գրաշեի, Աղավնու, Ս. Գրի-  
գորյանի, Վեսպերի, Վ. Գրիգորյանի, Ղ. Կոմունու, Գ. Հայրյանի,  
Շողենցի, Արամունու և ավելի երիտասարդների բազմաթիվ լիբի-  
կական երգերը:

Այս ստեղծագործությունների մեջ մեր բանաստեղծները,  
յուրաքանչյուրն իր տաղանդի ու շնորհքի ներածին չափով, բայց  
անհուն խանդավառություններով և ինքնամոռաց ներշնչմամբ՝ մեր  
ժողովրդի երախտապարտ ու երջանկությամբ լի սիրտն է բացել,  
արտահայտել մեր անսահման սերն ու նվիրվածությունը մեծ  
Ստալինին—պատմելով նրան մեր ժողովրդի բազմատանջ կյանքի  
պատմությունը՝ նախորդ դարաշրջաններում և պատկերելով այն  
նոր, երջանիկ կյանքը, որով ապրում է մեր ժողովուրդը Ստալին-  
յան Կոնստիտուցիայի լույսի տակ՝ միութենական հսկայի մյուս  
եղբայրական ժողովուրդների հետ միասին:

Անհնար է այստեղ մեկ առ մեկ խոսել բոլոր այդ ստեղծա-  
գործությունների մասին, բայց և չի կարելի կանգ չառնել նրան-  
ցից գոնե մի քանիսի վրա, որոնք բանաստեղծական մեծ ար-  
վեստով են զրկված, մեր ժողովրդի ներկայի ու գալիքի երջան-  
կությամբ, ինչպես և նրա անցյալի բազմադարյան «պատմությու-  
նով ու կյանքով են լի»:

Ստալինյան Կոնստիտուցիայի առթիվ մինչ այժմ գրված  
գործերից ամենից առաջ պետք է խոսել Նալբիրի Զարյանի «Վե-  
րածնունդ»-ի մասին:

«Վերածնունդ»-ը մեր մեծ Առաջնորդի՝ 1920 թվին Սովե-  
տական Հայաստանին ուղղված պատմական ողջույնի խոսքի  
բարձրարվեստ բանաստեղծական իլյուստրացիան է՝ հայկական  
սովետական պոեզիայում:

Ամենքին հայտնի են Առաջնորդի այդ ողջույնի հրեղեն  
խոսքերը, որ պայծառորեն լուսավորեցին մեր անցած պատմու-  
թյունը և մեր երջանկության ուղին, մեր ժողովրդի սոցիալիս-  
տական վերածնությունն ուղին:

Նալբիրի Զարյանի «Վերածնունդ»-ն ահա, այդ՝ պատմական  
իրականություն դարձած մեծ վերածնունդի հիանալի բանաստեղ-  
ծական պատկերն է, որն սկսվում է հետևյալ իմաստալից սիմվո-  
լիկ համեմատությամբ.—

«Մի թուփ տեսա ճամփամիջին, ապրեմ—չապրեմ սպիտակ,  
նա կոխտովել էր, կրագեղ անցորդների ոտքի տակ:  
Կաթում էր հյութն ինչպես արյուն ցողուններից նրա ցած,  
եվ տերևներն էին բոլոր փոշեթաթախ, ծվատված.  
Բայց նա պահել էր լուսեղեն իր ծաղիկներն անաղարտ,  
եվ արևով էր ողողված նրա հայացքը հըպարտ:  
Ես ցանկացա պոկել ծաղիկը արմատից ու նետել,  
Ամենօրյա դանդաղ մահից նրան ընդմիշտ ազատել:  
Բայց նա ցողունը լուկ զիջեց՝ պայքարելով մինչև վերջ  
Ու խորամուկ արմատներով մնաց կրկին հողի մեջ»:

Ստեղծելով այս գեղեցիկ իմաստալից բանաստեղծական սիմ-  
վոլիկ պատկերը, բանաստեղծն ավելացնում է.

«Ետ նայեցի ես մի վայրկյան մոտիկ-հեռու դարերին  
Եվ հիշեցի, իմ ժողովուրդ, աղետավոր քո ուղին»<sup>1</sup>:

Այնուհետև, իր բանաստեղծությունից երկրորդ մասում Զա-  
րյանը պատկերում է մեր ժողովրդի այդ հանրածանոթ «աղետա-  
վոր ուղին», ժողովրդի, որն իսկապես շատ նման էր բանաստեղծի  
հիշած «ապրեմ—չապրեմ ծաղիկ» կոխտոված թփին:

Բանաստեղծը հիշեցնում է, որ այստեղ մեր ժողովրդի բազ-  
մադարյան հայրենի երկրի «վեհ դադաթներով՝ հազար մրբիկ,  
հազար ամպ» է անցել, «հազար թրեր են կոտրատվել կայծակների  
սաստկություններ»:

«Հին Արևելքն ու Արևմուտքն այստեղ իրար բաղխվեցին» և  
իրենց աշխարհավեր բանակների ոտքի տակ անթիվ անդամ ավե-  
րեցին Հայաստանը, տրորեցին նրա աշխատավոր ժողովրդին:

Այնուհետև, իր բանաստեղծությունից երրորդ մասում Զարյանը  
վառ բանաստեղծական խոսքի գունեղ շարիխներով պատկերում  
է հայ ժողովրդի պատմության կապիտալիստական դաժանատեսիլ  
դարաշրջանը, երբ հայ ժողովուրդը տանջվում էր կրկնակի տան-  
ջարանում— զրախից՝ օսմանյան սուլթանների ու ուսական ցա-

<sup>1</sup> «Յուրհրդային զրականություն», 1937 թ., № 3, էջ 25:

ընդհանուր գերատիպի ճիշտաներում, ներսից՝ ազգակից շահագործող դասակարգերի մագիլներում: Մի դարաշրջան սակայն, որ լի է պայծառ էջերով մեր ժողովրդի ազատագրական պայքարի հերոսական դրվագներով, ազատութեան ճանապարհի անդուլ որոնումներով, մարտաշունչ Նալբանդյանից՝ մինչև հայ ժողովրդի ազգային ու սոցիալական ազատագրական պայքարի լենինյան-ստալինյան էտապը:

...Մինչև ելավ կյանքի ծովից բոլշևիկյան մի սերունդ  
Անցած, դալք մրրիկների կայծակի փայլն աչքերում,  
Սպանդարյանը բոցարյուն և Շահումյանը պայծառ,  
Որ Լենինի ու Ստալինի պատգամներով փրկարար,  
Տարան կորած քո կարավանն ու մոլորված քո ուղին՝  
Միացնելու օվկիանոսումի դասակարգի զբոսներն:

Ահա միայն այդ ժամանակ, միայն բոլշևիկմի, միայն Լենինի ու Ստալինի շնորհիվ, ասում է բանաստեղծը. —

«Ապրեմ-չապրեմ ծաղկի միջից վերածնված դու ելար,  
Ինչպես Վահագրն պատանի այն եղեգից բոցավառ,  
Նվ չոկտեմբերը քեզ ավել բոցափրփուր նվառվեցիր,  
Նվ նետվեցին ռազմի ճակատ քո զավակներն անվեհեր»:

Նդբայրական ժողովուրդներն իրենց ձեռքը մեկնեցին և Լենինի ու Ստալինի իմաստուն քաղաքականութեամբ բուժվեցին՝ հայ ժողովրդի բոլոր «գերմարդկային դարավոր» վերքերը:

«Հիմա դու չես ճամբին բուսած ապրեմ-չապրեմ ծաղկի թուփ,  
Այլ մի պարտեզ դարարեցի՝ ծաղիկներով երկնահուպ:  
Ձրնադ մի մարդ սոցիալիզմի անծայրածիր պարտիզում,  
Ուր անասան են պահակներն ու պարտիզական իմաստուն»:

Բանաստեղծն այնուհետև հիանալի պատկերում է հայ ժողովրդի ազատ ու երջանիկ աշուրը, երկրի սոցիալիստական փառավոր վերածնունդը: Գեղեցիկ ու իմաստալից է մանավանդ հետևյալ պատկերը, որ ներկայացնում է մեծ Առաջնորդի, «Աշխատանքի, Միութեան Օրենքն» ստեղծողի և աշխատավոր ժողովրդի մտերմական անխզելի կապը, որի մեջ հայ աշխատավոր մասսաները՝ հայ բանվորն ու բանվորուհին, հայ գեղջուկն ու գեղջուկուհին կանգնում են իրենց նոր, ազատ մարդկային կերպարանքով ու կյանքով:

«Ու գեղջուկին արարատյան, դարերի լուռն անտեղյակ,  
Մեծածխոյ հանդեսներում, ձեռքին մատիտ ու տետրակ,  
Պատմում է վառ հիացմունքով, ինչպես ամուր նա սեղմեց  
Կրեմլի պայծառ դահլիճներում Առաջնորդի ձեռքը մեծ,  
Այն ձեռքը, որ հավետ հանձնեց հողն իր տիրոջ իսկական,  
Այն ձեռքը, որ գրեց օրենքն Աշխատանքի, Միութեան,  
Որի անշեղ ցուցամատով փոխվում է կյանք ու քարտեզ,  
Բերդ է դառնում ճոճիճն անանց, և անապատը՝ պարտեզ»:

Ահա այդ ամենի շնորհիվ, հպարտութեամբ բացականչում է բանաստեղծը՝

«Հըզոր ես դու, իմ ժողովուրդ, և քո դալքն ապահով —  
Ստալինյան եղբայրության երկաթադիր Օրենքով»:

Այսպիսով՝ Ն. Ջարյանի «Վերածնունդ»-ում մեր ժողովրդի սոցիալիստական վերածնունդն է պատկերված, մի վերածնունդ, որի հանձարեղ ցուցումը մենք տեսնում ենք Ստալինյան Կոնստիտուցիայի արևաբառ հոգվածներում:

Բանաստեղծական մեծարժեք գործեր են նաև «Հայաստանի երիտասարդ զրոյների նամակը՝ ժողովուրդների առաջնորդ, սիրելի ուսուցիչ, ընկեր Ստալինին», որ գրել են շքանշանակիր բանաստեղծներ Գեղ. Սարյանը, Հովհ. Շիրազը, Գուրգեն Բորյանը, ավելի երիտասարդ բանաստեղծներ Հենրիկ Թումանյանը, Վահան Արամունին, Սիլվա Կապուտիկյանը և Գր. Արտունին:

Այդ նամակ-բանաստեղծությունը, ինչպես և շքանշանակիր բանաստեղծ Հովհ. Շիրազի «Մեր երջանկությունը՝ նամակ-երգ ընկեր Ստալինին» վերնագրով լիբիկական պոեմը, գրված են այն պատմական օրերին, երբ մեծ Ստալինը և նրա մարտական զինակիցներ Վ. Մ. Մոլոտովը ու Ա. Ի. Միկոյանը համաձայնություն տվին Ներվանի աշխատավորության կողմից քվեարկվելու որպես Հայկական ՍՍՌ-ի Գերագույն Սովետի ղեկավար: Հայկական սովետական պոեզիայի երիտասարդ սերնդի այդ մի խումբ շնորհալի ներկայացուցիչների հիշյալ երկերում զվարթալիկ ու ցնծալիկ հնչում է հայ ժողովրդի սրտի ձայնը՝ ուղղված մեծ Առաջնորդին, լիբիկական ջերմութեամբ, այլև էպիկական-հերոսական խանդավառութեամբ պատմելով նրան մեր երջանկության մասին:

«Մեր ձայնը քեզ, անմար արև, մեր սերը քեզ, ով իմաստուն,  
Ողջուն քեզ հայ ժողովրդից, որ վառ գարուն ունի սրտում»:

Մեր գետերն են լեզու առել, մեր աղբյուրներն են կարկաչում,  
Երգիչները բլբուլ դառել, անուշ երգով քեզ են կանչում»:

Այնուհետև բանաստեղծները նկարագրում են այն անպատում ցնծությունը, որ ապրեց հայ ժողովուրդը՝ կարդալով Ստալինի ու Նրա զինակիցների համաձայնությունը Հայկական Գեղապոլսյն Սովետի դեպուտատ քվեարկվելու մասին: Այդ ցնծությունը պատկերված է վառ, արտահայտիչ պատկերներով ու համեմատություններով:

«Ուրախ լուրերդ երբ որ լսեց՝ կես գիշեր էր՝ անդորր գիշեր»—

ասված է երիտ-գրողների նամակում, և ապա՝

«Ծագել ցանկաց արեւ վառ ու քեզ գրկել հենց գիշերով,  
Քնից ելան, համեղ տվին երգիչները — քո ջինջ սիրով:  
Ու զողանջեց խոր գիշերը, բուրեցին սեր, երգ ու խնդում. —  
«Մեր սրտերը, մեր արտերը, այգիները մեր ծով հանդում:  
Լուսաբացին շուտ դուրս եկան մեր արևի հետ միասին,  
Ծաղկունքն ամեն նոր հիացքով շշնջացին կյանքիդ մասին»:

«Թե մի գետ էր ուրախության հայոց կյանքը, մի ծով դարձավ,  
Թե մի ծով էր՝ ծավալվեց նա, երջանկության օվկիան դարձավ»:

Այնուհետև երիտասարդ բանաստեղծները, ինչպես և Նրանցից Հովհ. Շիրազն իր՝ առանձին գրած «Մեր երջանկությունը» նամակ-երգում՝ վերհիշում են «մեր հայկական ժողովրդի անցյալը հին», որ այնքան ծանր է եղել, բայց և հերոսական պայքարներով ու կուրտուրայի, արվեստի հիասքանչ գանձերով լի. և ապա հիանալի պատկերված է հայ ժողովրդի վերջին՝ մոտ քսան տարվա փառապանծ պատմությունը, որն ամբողջապես կապված է մեծ Ստալինի անվան հետ, մի պատմություն, որի ամեն մի առաջընթաց քայլի մեջ կա Լենինի և Ստալինի հանձարի ստեղծագործական էներգիան: Երիտասարդ բանաստեղծները պատմում են և այն մասին, որ Հոկտեմբերից դեռ շատ առաջ Լենինն ու Ստալինն էին, որ «բուլեղիմի վառ արևի շողքը» փռեցին հայ ժողովրդի ազատագրական պայքարի ճանապարհին՝ առաջնորդելով նրան դեպի սոցիալիստական ռեվոլյուցիայի հաղթանակը—

«Լենին դյուցազն ու դու, արև, ձեր հանձարի միասնությամբ՝  
Արցունքի ծով մեր երկիրը լցրիք անհուն երջանկությամբ:

Եվ տուն եկավ մեր Հաղարան էն Բլբուլը ազատաբեր,  
Ու գեղեղաց, և ծաղկեցին նրա շնչով հանդ ու արտեր»:

Այդ նամակ-բանաստեղծությունը վերջանում է երիտասարդ սովետական հայրենասերների խանդավառ երգումով, մեծ Ստալինի հանձարով անառիկ դարձած սոցիալիստական հայրենիքի ու սիրելի Առաջնորդի նկատմամբ՝ մեր ժողովրդի անհուն սիրտ ու նվիրվածություն մասին: Իր բանաստեղծական մտահղացումով, նաև կատարումով հիանալի գործ է բանաստեղծ Մկրտիչ Խերանյանի ծավալուն պոեմը՝ «Հանձարեղ պոեմը» վերնագրով՝ գրված Ստալինյան Կոնստիտուցիայի առթիվ: Բանաստեղծը մի խիզախ փորձ է արել պատկերելու մեր մեծ Առաջնորդի ստեղծագործական կերպարը՝ մարդկության նոր, սոցիալիստական դարաշրջանի «Արդարության Օրենսդիրը» «լուսագրելիս», ինչպես արտահայտվում է բանաստեղծը:

Իր ուժի ներածին չափ՝ երիտասարդ բանաստեղծին հաջողվել է մեր պոեզիայում առաջինը — գեղարվեստորեն պատկերել մեծ Ստալինի դյուցազնական կյանքի մի պատմական նշանակալից մոմենտը, երբ նա՝ Ստալինը իր հանձարի ստեղծագործական կրակով գրեց մարդկային երջանկության իմաստնագույն Օրենքը՝ ՄՍՍՄ-ի նոր Կոնստիտուցիան: Գեղարվեստական հաճույք են պատճառում Խերանյանի այս պոեմի մանավանդ առանձին հատվածները, օրինակ՝ Լենինի այցը Ստալինին այն երջանիկ մոմենտին, երբ «Մեծ Քերթողն ավարտել է» արդեն «իր հանձարեղ էպոպեն», և Լենինը հիացմունքով ու գոհ լսում է Նրա ընթերցումը, լսում՝ իր հանձարեղ աշակերտին: Ահա մի կտոր, որ պատկերում է այդ մոմենտը.

«Ավարտել է Մեծ Քերթողն իր հանձարեղ էպոպեն,  
Եվ արդ ապրում է խաղաղ երանության վեհ բոպեն»:

«...Հառած հայացքն Իլիչի մաքրամարմար մեծ բյուստին՝  
Իմաստնորեն երազուն ծխում է նա վերտին.  
Պարտել է Քերթողին — ամբողջ գիշերը արթուն —  
Վաստակավոր ու խաղաղ հոգնությունը իմաստուն.  
Ու... ծանրանում է ահա մի ծանրը ձեռք իր ուսին,  
Հանկարծ հոգին իր գրկող կարոտի հետ միասին.  
Ետ է դառնում նա հանդարտ ու ... հիացում հոգեթով —  
Լենինն ահա աչքերում պայծառ ժպիտ ու գորով...»

«...ինչպես երկու արևներ հանկարծ իրար հանդիպած՝  
 նրանք ձուլվում են ահա իրարու մեջ՝ զրկաբաց...  
 ... Իմ հանճարեղ աշակերտ,  
 Եկել եմ, որ կարդաս ինձ քո պոեմը լուսավերտ,  
 Որ երկնեցիք այս գիշեր...  
 Իմ թանկագին բարեկամ, ես էլ քեզ պես ու քեզ հետ  
 Շնչել եմ քո շողողուն յուրաքանչյուր տողի հետ.  
 Քեզ հետ արթուն այս գիշեր լուսացրել եմ, ո՛ր, ես է՛լ.  
 Կարդա՛, ուզում եմ լսել...»  
 Ու կարդում է Ստալինն իր պոեմը հանգ առ հանգ:  
 ... Գո՛հ է անչափ Ուսուցիչն, ի՞ր երազն է փողփողեջ  
 Մարմին առել հանճարեղ Աշակերտի գործի մեջ»<sup>1</sup>:

Եթե բանաստեղծ Մ. Խերանյանը ներշնչվել է Ստալինյան  
 Կոնստիտուցիայի հանճարեղ հեղինակի ստեղծագործական կերպա-  
 րը տալու գաղափարով, ապա բանաստեղծ Վահան Գրիգորյանն իր  
 «Երջանկության Օրենսգիրք»<sup>2</sup> ոտանավորում պատկերում է այն  
 երջանիկ պատմական ժամը, երբ նա՝ Ստալինյան Կոնստիտու-  
 ցիայի հեղինակը՝ Կրեմլի մեծ դահլիճում հանդես է գալիս և զե-  
 կուցում իր այդ անմահ ստեղծագործության մասին —

«Լեք լցված է մեծ դահլիճը Կրեմլի —  
 Իմ բազմագլխի հայրենիքի մարդկանցով,  
 Բռնկվում է փոթորիկը ծափերի,  
 Եվ չի լռում... ահագնում է, որպես ծով...»  
 «Բարձրանում է հզոր ձեռքը հայրական,  
 Հանդարտվում է անդուսպ ծովը ծափերի... —  
 Խոսում է նա. — հաղթանակի վեհ հոկան  
 Երջանկության նոր Օրենսգիրքը ձեռքին»:

Ստալինյան Կոնստիտուցիայի հրապարակման շրջանում ու  
 նրա առթիվ գրված, նրա համամարդկային պատմական իմաստն  
 արտահայտող բանաստեղծական լուրջ գործերից են նաև բանաս-  
 տեղծուհի Հռ. Պողոսյանի վերևում հիշված «Երկնագույն գորգը»  
 և «Երջանկության գիրքը», տաջիկական իմաստուն սովետական  
 ժողովրդական լեգենդների հաջող մշակումները: Առաջին լեգեն-  
 դում Սովետական Միությունը նմանեցված է մի հրաշագործ  
 «Երկնագույն գորգի», որ հյուսել է մեծ Ստալինը, գորգ, որի  
 մեջ պատկերված է արյունաբերու բայերից ազատագրված ժողո-

վորդների երջանկությունը: Լեգենդի հերոսուհին՝ գեղեցիկ Սու-  
 լաշը, երբեմնի «...խեղճ դեխկանի աղջիկը անգործ», որ սովետա-  
 կան իշխանության շնորհիվ՝ բայի գիշատիչ մագիլներեց ազա-  
 տագրված և իր ազատ հայրենիքում «զորեղ դատավոր է դար-  
 ձեղ», իր հորը պատմում է նոր կյանքի ու նոր Օրենքի մասին.

«... Հայր իմ հարազատ,  
 Մեծ մարդ է ավել մեկ օրենք ազատ.  
 Նոր օրենք տվեց Ստալինն անմահ,  
 Նա է, որ փռեց մեր երկրի վրա,  
 Մեծ քաղաքներում, դաշտերում, այգում,  
 Մեր երջանկության գորգը երկնագույն»:

Իսկ «Երջանկության գիրքն» էլ Կոնստիտուցիան է, համաձայն  
 տաջիկական այդանուն լեգենդի:

Տաջիկական այդ նույն «Երջանկության գիրքը» լեգենդը  
 հիանալի մշակել է նաև բանաստեղծ Սողոմոն Տարոնցին՝ քա-  
 ռտոնյա յամբական ոտանավորով: Տարոնցու «Երջանկության  
 գիրքը» լեգենդը հաջողությամբ, հիանալի պատկերներով ու հա-  
 մեմատություններով տաջիկ ժողովրդի այդ իմաստուն ֆանտա-  
 ղիայի պտուղը մարմնացրել է բանաստեղծուհին:

Տաջիկ ժողովուրդը՝ արտահայտելով բոլոր ճնշված ժողո-  
 վորդների դարավոր երազանքը, ստեղծել է մի հմայիչ լեգենդ  
 մարդկության երջանկության գրքի մասին: Լենկթեմուրը ոչնչաց-  
 րեց «Ժողովրդի սրտի թարգման մի անանուն մարգարեի» գրած  
 գիրքը՝ համոզված լինելով թե այլևս չի իրականանա այդ գրքի  
 արտահայտած մարգարեությունը:

«Ձեք իմանում Լենկթեմուրը, որ այն գիրքը կըլինի —  
 Կյանքի նման անընդմիջվող, սիրո նման կենդանի...»:

Այնպես անթիվ դարեր... ժողովուրդն անդուլ պայքարեց  
 Լենկթեմուրի թոռների ու նրա բոլոր հետնորդների դեմ՝

«Այլանդությունն ամուր պահած հաղարածալ սրտի մեջ.  
 Կյանքի նման հաստատահիմն, արեգակի պես անշեջ»:

Այնուհետև՝

«Դարեր հետո, Կովկասի սեզ, ձյունագագաթ լեռներում,  
 Արեգակը և լուսինը հանդիպեցին իրարու»:

<sup>1</sup> «Խորհրդային գրականություն», 1938 թ. № 8—9, էջ 61—62:

<sup>2</sup> «Գրական թերթ», 1937 թ. դեկտեմբեր, № 6:

եվ այս երկրորդ հանդիպումից աշխարհ եկավ մի քաջագուն պատանյակ, որը հետո դուրսագնացներն հասակ առավ, «զինեց ժողովրդին» տիրոջներին-բռնակալներին դեմ, իրականացրեց դարավոր երազանքը երջանկության մասին, և ապա՝

«Ճշմարտագետ մարգարեի ձեռքով իրա հաստատուն,  
եվ անցյալի շառաչակից կոիքների մասին բոլոր,  
եվ ներկայի հաղթանակի, երջանկության լուսահորդ,  
ժողովրդի կամքն ու սիրտը դրած իր մեծ սրտի մեջ,  
Գրեց մի նոր երջանկության երկաթե դիրք լուսաէջ,  
Որի ամեն մի ջինջ տողում, արեւի պես փողփողուն  
Արդարություն, Ազատություն, Երջանկություն է շողում:  
Եվ կշողա ժողովրդի սրտի մեջ ու պատմության,  
ժողովրդի նման անմահ—հավիտենից հավիտյան...»<sup>1</sup>

Մենք կարող ենք ասել, որ այդ լեզենդները, ինչպես և մեր մյուս բանաստեղծների ու աշուղների, ժողովրդական երգիչների՝ Ստալինյան Կոնստիտուցիային ու նրա հանձարեղ կերտողին նվիրված երգերը մեր պոեզիայի երկնագույն գորգի հիասքանչ վառվռուն նախշերն են, որոնցով հարազատորեն հյուսվում է մեր սիրելի Առաջնորդի նվիրական կերպարը:

\* \* \*

Միութենական ռեսպուբլիկաների սոցիալիստական ընտանիքում իր երջանկությունն ապրող հայ ժողովրդի գեղարվեստական-ստեղծագործական մտքի շատրվաններն են ուժգնորեն ցայտում ի պատիվ մեծ ազատարար Առաջնորդի և ի փառս մեր նոր կուլտուրայի ու արվեստի: Մեր ժողովուրդն իր բազմադարյան պոեզիայի ու բանավոր ստեղծագործության հրեղեն հյուսվածքի ամենաթանկագին թելերից նկարագործում է իմաստուն Առաջնորդի հիասքանչ գորգանկարը, հավերժ չխամրող գույներով:

Ճիշտ է, մեծ Ստալինին վերաբերող «ոչ մի երգ դեռ չի հասել» նրա «անառիկ բարձրության» և անհատակ խորությանը՝ «դեռ չի սպառել, և կսպառվի արդյոք անտակ մի օվկիան» (Ն. Զարյան): Մեր սիրելի մեծ Առաջնորդի հերոսական դուրսագնական կյանքի փառապանծ 60-ամյակին՝ սովետական հայկական

պոեզիան ու ֆոլկլորը (ինչպես և ամբողջ գրականությունն ու բոլոր մյուս արվեստները) հասել են նշանակալից նվաճումների: Բայց դրանք միայն սկիզբն են հետագա բուռն զարգացման, հետագա մեծ թռիչքների, որոնք մեր պոեզիան ու ողջ գրականությունը կհասցնեն աներեակայելի բարձր մակարդակի, մեր հայրենիքի բարգավաճման ստալինյան էպոխային արժանի մակարդակի, երբ ավելի լայն չափերով կհորդեն մեր բազմադարյան տաղանդավոր ժողովրդի ստեղծագործական էներգիայի բոլոր կարելիությունները: Հայ ժողովուրդն իր գեղարվեստական կուլտուրայի հետագա զարգացման ընթացքում, սովետական մյուս ժողովուրդների հետ միասին, իր հոգու թանկագին մետաղից կծուի մեծ Ստալինի դուրսագնական «անվանն արժանի հուշարձաններ փառավոր»՝ գալիք սերունդներին ի տես: Դրանք կլինեն բարձրարվեստ մոնումենտալ գործեր, որոնք կպատկերեն մեր ժամանակի մեծ մարդու տիրապետական կերպարը, որի մեջ գալիք սերունդները պայծառորեն կտեսնեն՝ «մարդկության թռիչքը անհրաժեշտության թագավորությունից դեպի ազատության թագավորությունը» (Ֆ. Էնգելս) — կոմունիզմը: Գեղարվեստական այդ հուշարձաններում կարտացոլվի ժողովուրդների սիրելի Առաջնորդի համայնապարփակ կերպարը: Նրանցում խորն ընդհանրացումներով կարտացոլվի այն բոլոր նորը, լավագույնը, հերոսականը, կենսականը, գեղեցիկը և հավերժականը՝ ինչ որ կա ու ստեղծվել է սոցիալիզմի հայրենիքում՝ Հոկտեմբերի հաղթանակից սկսած մինչև Ստալինյան Կոնստիտուցիայի հռչակումն ու կիրառումը, մինչև Ստալինի փառապանծ 60-ամյակի այս օրերը և կարտացոլվի մանավանդ այն, ինչ որ դեռ ստեղծվելու է, լինելու է մեր հզոր հայրենիքի հեքիաթական հրաշքերով լի մոտավոր ու հեռավոր ավելի պայծառ ապագայում:

Ստալինը՝ սովետական լայնածավալ հայրենիքն է իր գունագեղությամբ ու հարստությամբ, իր համաշխարհային-պատմական հաղթություններով, իր հզորությամբ, իր մոտ 200 միլիոն բազմազգ ժողովրդով, որ հաղթական ու հաստատուն կանգնել է ողջ մարդկության ավանդադրում՝ հաստատուն, պայծառ հավատով ու անհողորդ՝ «նայելով Լենինի անշեղ ցուցամատին», մեր էպոխայի դուրսագնի առաջնորդությամբ՝ գնում է դեպի կոմունիզմը:

<sup>1</sup> Ս ո դ ո մ ո ն Տ ա ր ո ն ց ի — «Բանաստեղծություններ», 1939 թ., էջ 172:



212.

258

Պատ. խմբագիր՝ Հ. Կարապետյան  
 Տեխ. խմբագիր՝ Վ. Մանուկյան  
 Լեզվ. խմբագիր՝ Ռ. Տոնյան  
 Պատ. սրբագրիչ՝ Ս. Շահբաղյան

## ՈՒՂՂՈՒՄՆԵՐ

| Էջ | Տող      | Տ ա ղ Վ ա ծ է                                 | Պ ե տ ք է լ ի ն ի                                                                                                                        |
|----|----------|-----------------------------------------------|------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|
| 12 | 10 վ.    | զբաղանդությունը                               | սովետական գրականությունը                                                                                                                 |
| 38 | 10-11 վ. | «Պարտիական աշխատանքի<br>թերությունների մասին» | «Պարտիական աշխատանքի<br>թերությունների և արոցկի-<br>տական ու այլ երկերեսանի-<br>սերին լիկվիդացիայի ենթաբ-<br>կերու միջոցառումների մասին» |

Հանձնված է արտադրության 19/X 1940 թ.

Ստորագրված է տպագրելու 12/XI 1940 թ.

ՎՖ 2271, պատվեր № 248, հրատ. № 78, տիրաժ 2000

Փորձատ 60×84<sup>1/16</sup>, 41/8 տպ. մամուլ.

ԱրմՖԱՆ-ի հրատարակչության տպարան, Երևան, Լենինի փողոց, 67.

ՀՀ Ազգային գրադարան



NL0379292

63.093